



ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԳԷՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԵՐ ՆՈՐ ՀԱՍՑԷՆ Է

L. FRANK,

32, CHESTERTON ROAD,

(ENGLAND).

LONDON, W.

ՌՈՒՍ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԳԱՂՏՆԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՄԸ ԿՈՎԿԱՍԻ ՄԱՍԻՆ

ՌՈՒՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԸՆԴԴԷՄ ՀԱՅԵՐՈՒՆ

«Թայվզ» իր ապրիլ 3-ի եւ 11-ի թիւերուն մէջ հրատարակեց ամենակարեւոր յօդուած մը որուն նիւթը կը կազմէր Կովկասի ընդհանուր կառավարիչ գործակալ Կալիցինի իշխանի մէկ գաղտնի տեղեկագիրը զոր 1898-ի գարնան Բեդրպուրի գտնուած ատենը ներկայացուցած է Չարին։ Չարը ոչ չի ոչ ուր կարողացած է տեղեկագիրը եւ չուսանցիլի վրայ իր հաշտութիւնը կամ դիտողութիւնները յայտնած է։ «Թայվզ» նշանաբանը չի հրատարակէր այդ տեղեկագիրը, ձապա անկից քաղուածքներ կ'ընէր իր խորհրդածութիւնները խառնելով անոնց։ «Թայվզ» ի յօդուածին առաջին մասը, որ մի միայն Հայերուն կը վերաբերէ, նշանաբանը կը ներկայացնէր այս տեղ։ Մեր ընթերցողները քիչ մը հետզհետէ գտնեն մեր խնդրական յօդուածը այս տեղեկագրին վրայ։ Իսկ մեր յաշտութիւնը կը պահէր տեղեկագրին երկրորդ եւ երրորդ մասերը, որոնք Կովկասի ընդհանուր գործերուն կը վերաբերին։

Ա

Ռուսական Կովկասը այլ եւս անգլիացի զբոսաշրջիկները, որսորդները, կամ լեռն բու սիրահարները չէ միայն ընդհան կը բաշէ։ Այս վերջին երկու երեք տարիներս,

անգլիացի զբոսաշրջիկներն ալ երեւան եկած է աշխարհի այդ մասին մէջ, եւ հետեւանքը այն եղած է որ անգլիական մեծագումար զբոսաշրջիկ մը արդէն մտած է Պաքուի նաւթային ճարտարագործութեան մէջ եւ Կովկասի սրիշ կողմերը։ Ռուսական կայսրութեան այդ հարուստ եւ կարեւոր նահանգին կացութիւնը հետեւաբար նիւթական շահեկանութեան առարկայ մը եղած է անգլիացի ընթերցողներու շատ աւելի ընդարձակ շրջանակի մը համար։ Քաղաքական տեսակետով ալ մեծապէս շահեկան են Ռուսիոյ տեղական յարաբերութիւնները ռուսական սահմանադրին այդ ծայրին կից ասիական պետութեանց հետ։ Հետեւաբար, սրիշ արդարացման պէտք չկայ ի լոյս ընծայելու համար Կովկասի մասին յոյժ կարեւոր պաշտօնագիր մը, որ նոյն ինքն Կովկասի ընդհանուր կառավարիչ Կալիցին իշխանին մէկ գաղտնի տեղեկագիրն է նորին կայսերական վեհափառութեան Չարին ուղղուած։

Չորավար իշխան Կալիցին Կովկասի ընդհանուր կառավարիչ եւ այդ գինուարական շրջանակին ընդհանուր հրամանատար անուանուեցաւ 1896 զեկտեմբերին։ Իր նոր պաշտօնավայրին ընդարձակ աստիճաններ մէջ զանազան իրերուն վիճակը առանձնիւ ամիս բննել յետոյ, (1898) գարնան Թիֆլիսէն Բեդրպուրի գործաւ եւ իր առաջին տեղեկագիրը ներկայացուց Կայսեր։ Այդ պաշտօնագիրը կը խօսի շատ մը խնդիրներու մասին որոնց մէջ են Անգլիոյ Կովկասի ուստական գաղթաւորութիւնը, Հայերը, աղանջաւորները, աւազակութիւնը, օտար գրամաղաղիւր եւ հոգեւորները, օտար հպատակներու կողմէ։ Տեղեկագիրը մեծ լոյս մը կը սփռէ ռուսական վարչութեան մէջտեղէն եւ տեսութեանց վրայ, եւ կը ներկայացնէ ազգային բազմազանութիւնը կայսրութեան ամէն մասերուն մէջ, ուր այլացեղ եւ այլակրօն հպատակ ժողովուրդները կը բնակատեսիլ իրենց զիրենք համաձայնեցնելու այն պաշտօնական եւ ուղղափառ ըմբռնումին որուն վրայ ձեւուած ըլլալու է ամէն աղէկ ուստահպատակ։

Ըմբռնելու համար ճշուով զոր Ռուսիան որքան կը բանեցնէ կ'Պոլիս՝ շարդերուն ատեն ուստական հոգը ապաստանած հայ գաղթականներուն վերադարձը ձեռք բերելու նպատակաւ, օգտակար է յիշել նախ այս տեղեկագրին մէկ կարեւոր հատուածը, որ կը բացատրէ ուստականութեան արտասովոր ձեւանարկը՝ այլ խեղճ մարդի-

կը՝ հակառակ իրենց կամքին՝ նորէն թիւրք լուծին տակ զրկելու: Կ. Պոլսոյ մէջ ուսական դիւանագիտութեան ջանքերը ակնհայտաբար կը բացատրուին Կալիցին իշխանին սա խօսքովը թէ, իր կարծիքով, հայկական շարժման «նպատակն է նախկին անկախ Հայաստանին վերականգնումը»:

Մինչեւ ցարդ այդ շարժումը սահմանափակուած մնացած է քաղաքներու զարգացած դասակարգերուն եւ հայ կղերին մէջ: Տակաւին տարածուած չէ դիւանական ազգաբնակչութեան մէջ, որ կը նկատէ թէ իր պարտքէն աւելին ըրած է կրելով կղերին իր վրայ դրած բեռը, օգնելու համար թիւրքիայէն եկած գաղթականներուն: Այդ շարժման պարապլուծներն են, Կալիցին իշխանին խօսքին նայելով, հայ կղերը, հայ մամուլը, եւ արտասահմանի հայ յեղափոխական ընկերութիւնները: Անդրկովկասի Հայերուն թիւր՝ բազմաթիւ միւս ցեղերուն՝ այնչափ փոքր է որ « եւ է մեծ վտանգ մը չի կազմեր այդ երկրին խաղաղութեանը համար: Տեղական իշխանութիւնները պէտք եղածին չափ ոյժ ունին նուաճելու համար խառնակութեան ամենաբոյժն փորձ: Հայերը սակայն զփուար թէ ուզեն այդպիսի վտանգ մը աչք առնել: Իրենց գործունէութեան յասկանիչն է միշտ միտիլ դերակշռութիւն ձեռք բերելու հանրային կեանքի ամէն շրջանակներուն մէջ, եւ ժողովուրդը շահագործել՝ առեւտուրով:

«Ասիկա բարձրագոյն իշխանութեանց վրայ պարագ «կը դնէ, ուսական վարչութեան պատուոյն համար, իրեն «բու աւելի կանոնաւոր եւ աւելի արդար միճակ մը հաս «տատել՝ ժողովրդին մնացեալ մասը պաշտպանելու համար Հայերուն այս շահագործող ձգտումներէն եւ քաղաքական ցանկութիւններէն:»

Ընդհանուր կառավարչին տեղեկագիրը կը շարունակէ սապէս.

«Անցեալ սեպտեմբերին Էջմիածին գացի՝ ամենայն Հայոց Գերագոյն Պատրիարքին (Կաթողիկոս) այցելութեան, եւ յաջորդ գեկտեմբերին նորին Սրբութիւնը ինձի փոխադարձ այցելութեան եկաւ թիֆլիս: Երկու անգամուն ալ իրեն հետ ունեցած խօսակցութիւններս իս համոզեցին թէ, իր յառաջացեալ տարիքին պատճառաւ, պէտք եղածին չափ անկախ չէր ինք, հապա իր կղերական օգնականներուն ազգեցութեանը տակ կը գտնուէր, որոնք իրենց անձնական նպատակներուն կը հետեւին եւ իրենց հայրենակիցներուն անկախութեան ձգտումները առաջ կը վարեն: Իրենց իտէալն է միակ եւ միացեալ Հայաստան մը: Պատրիարքին կը ներշնչեն չհամաձայնի մեր օրէնքներուն, եւ զանիկա կը զրգեն իր հոգեւոր իշխանութիւնը օրէնքէն վեր դնելու: Անիկա այսպէս կը մղուի գործելու եղանակի մը որ համաձայն չէ Կառավարութեան տեսութիւններուն:

«Բացատրեցի նորին Սրբութեան թէ Էջմիածնի Սինոդին իրաւասութեանը վերաբերող նիւթերու մէջ իր անձնական հրամանները կրնան մեծ շփոթութիւններ առաջ բերել իր հօտին կալուածական եւ ներքին գործերուն

մէջ, եւ իրեն մատնանիշ ըրի թէ հարկ է որ իր հրահանգները համաձայնեցնէ օրէնքին պահանջումներուն:

«Խնդիրը ուսումնասիրելէ յետոյ, համոզուած եմ թէ Պատրիարքին խորհրդականներուն այս ձգտումը, որոնք կը փոփաքին զանիկա պետական իշխանութեանց եւ սասնց ներկայացուցիչներուն իրաւասութեան շրջանակէն դուրս հանել, ժողովրդին միտքը պաշարելու է սա սխալ ըմբռնումովը թէ Կաթողիկոսը բացառիկ եւ կէս-անկախ զիրք մը կը վայելէ: Այս ըմբռնումն ալ՝ իր կարգին՝ ազէտ մտքերու մէջ գաղափար մը յառաջ կը բերէ անոր կարեւորութեանը, «չ միայն իբր հոգեւոր պետ Հայ Եկեղեցիին, այլ իբր ցուցադրիչը կամ ներկայացուցիչը Անդրկովկասի եւ զրացի ասիական պետութեանց Հայերուն քաղաքական միացման:

«Հետեւաբար, իմ կարծիքովս, կառավարական իշխանութիւնները ազգուօրէն պնդելու են որ Էջմիածնի Պատրիարքը եւ Սինոդը կէտ առ կէտ ի գործ դնեն օրէնքը: (Կայսրը ասոր զիմաց սա բառը կը գրէ. «Անշուշտ»)»

«Իբր ազգարարութիւն մը, եւ Հայ Սինոդին մէջ խառնակութեան մը առաջը աննելու համար, յանձնարարեցի հրաժարեցնել Սինոդին անգամակից երկու վարպետ, Վահան Տէր-Գրիգորեանց եւ Նահապետ Նահապետեանց անուն, այս վերջինը մասնաւոր քարտուղար Պատրիարքին:

«Խորհուրդ սուկ զանոնք կովկասի սահմաններէն դուրս տարագրել. եւ ձեր Վեհափառութիւնը այս սնօրիութիւնը վաւերացուց ինչեալ նոյեմբեր 12ին:

«Չեր Վեհափառութեան 1897 յունիս 14ի հրովարտակով՝ թեմական եկեղեցական դպրոցներուն փոխանցումը Հանրային կրթութեան կայսերական Նախարարութեան, մեծապէս կարեւոր է, որովհետեւ նպատակ ունի նոր հասնող սերունդները զերծ պահել հայ կղերին շարաշուք ազգեցութենէն: Այս հայ հոգեւորականները մերժեցին համակերպիլ նոր կանոնադրութեան: Հետեւաբար, 1896ին՝ եւ անցեալ տարուան սկիզբը, կովկասի բարձրագոյն իշխանութեանց հրամանով, 320 հայ վարժարան փակուեցան: 31 վարժարան միայն բաց մնացին. բայց ասոնցմէ ոմանք ալ վերջէն դոցուեցան կա՛մ ուսուցիչներուն անձեռնհասութեանը պատճառաւ, կա՛մ անոր համար որ կղերը, Պատրիարքէն եկած հրահանգին համաձայն գործելով, մերժեց հարկ եղած դրամը տալ այդ դպրոցներուն պահպանմանը համար:

«1892 ապրիլ 11ի կայսերական հրովարտակով, Անդրկովկասի եւ Սարաթոֆի Սարբեթա գաղութին բոլոր բողոքական եկեղեցական վարժարանները Հանրային կրթութեան կայսերական Պաշտօնատան յանձնուեցան՝ իրենց բոլոր կառուածներով եւ գրասենտով: Իրաւ է որ 1897 յունիս 14ի հրովարտակին մէջ բան մը ըսուած չէ հայ եկեղեցական դպրոցներուն կալուածներն ալ փոխանցելու մասին, բայց ասիկա լռելեայն կիմացուէր ըստ մեզ, քանի որ դպրոցները՝ առանց զանոնք պահպանելու միջոցներուն՝ աւելորդ պիտի ըլլային: Հետեւաբար ձեր Վե-

Հափառութենէն խնդրեցի վաւերացնել փակուած Հայ վարժարաններուն կալուածներուն փոխանցուը Հանրային Կրթութեան Նախարարութեան, և հրամանի կը սպասեմ:»

(Կայսրը այս տեղ կը գրէ. «Այդպէս ընելու է:»)

Պէտք է բացատրել, կ'ըսէ Թայրզ, թէ Անդրկովկասի մէջ Հայ Եկեղեցիին դպրոցական զբաղակները եւ կալուածները մեծ մասամբ նուիրուած են անհատներէ, սա բացորոշ դիտաւորութեամբ որ աղաքը կրթութիւն Հայ կղերին հսկողութեան ներքեւ: Հետեւաբար այս կարգի կալուածներու փոխանցուը ուս կառավարութեան, որ գանոնք պիտի գործածէ բոլորովին տարբեր կերպով մը, Ռուսիոյ Հայերուն կողմէ կը նկատուի իր անարդարանալի գրաւում մը, եւ այս գորովիլի տնօրինութեան շատ սաստիկ դիմադրութիւն եղաւ:

Հայ մասուլիսն թեւերն ալ կարտեցին: Կաթողիկոսին մասնաւոր թերթը, Արարատ, որ մինչեւ հիմա Էջմիածին կը հրատարակուէր՝ Պատրիարքին ալլամերժ եւ անձնական պատասխանատուութեան ներքեւ, հիմա Թիֆլիս կանխադեղ գրաքննութեան կ'ենթարկուի, որովհետեւ դպրոցներուն յանձնումին հակառակ խօսեցաւ, եւ «հակառակ խօսումանը, Հայերուն եւ Ռուսերուն միջեւ մերձեցման ի նպաստ չէր գործեր:» Թիֆլիս հրատարակուող միւս հայերէն պարբերականներն ալ տեղեկագրին մէջ կ'ամբաստանուին թէ միմիայն կ'օգնեն Հայերուն եւ Ռուսերուն միջեւ խրամատը ընդլայնելու, փոխանակ աջակցելու որ ձուլում մը առաջ գայ: Ուրիշ քաջածանօթ լրագիր մը, Արձագանք, որ «Երիտասարդ Հայաստան»ի թերթը ըլլալու անունը սենէր, վերջ ի վերջոյ բոլորովին ջնջուեցաւ՝ երկու անգամ զաղարման գատապարտուելէ յետոյ, իւրաքանչիւր անգամուն ութ ամիս: Վերջին յանցանքը, որ այդ թերթին ճակատագիրը վճռեց, կը կայանար «ինչ ինչ դիտողութիւններու մէջ գործնք ըրած էր Թիֆլիսի գիմնազիտներէն մէկուն մէկ ուս ուսուցչին դէմ, և որոնց նպատակն էր ընկերութեան եւ դպրոցականներու մէջ թշնամական զգացումներ ստեղծել, ազգային տեսակէտներով:» Ընդհանուր կառավարիչը կ'ըսէ թէ նոյն հակառակ ոգին եւ թունաւոր ձգտումները կը տեսնուին Հայերու սեփականութիւնը եղող կամ Հայերու հրատարակած ուսուցիչներուն մէջ: Հետեւաբար թողտուութիւն կը խնդրէր գրաքննութեան մասնաւոր գրութիւն մը յատկացնելու՝ իր անձնական հսկողութեան ներքեւ՝ հայկական բոլոր պարբերականներուն եւ լրագիրներուն, ինչ լեզուով ալ հրատարակուին: Ըստ այդմ, անոնց հրատարակիչները պիտի հարկապարտին ուսուցիչն ու բոշ ծրագրի մը հետեւելու, որ իրենց համար յատկապէս պիտի պատրաստուի ընդհանուր կառավարչին Թիֆլիսի պիւանատան մէջ:

Անդրկովկասի մէջ հայկական խնդրին յարակից անմիջական զմուտարութիւններէն մին է Թիւրքիայէն եկած հայ գաղթականներուն վերադարձը: Այդ գաղթականներուն մեծ մասը բոլորովին անանկ են եւ անկարող ո եւ է աշխատանքի, բացի երկրագործութենէ: Իրենց հետ հի-

ւանդութիւններ բերած են. — Կարսի գաւառին մէջ ժամատանդի (Թիֆո) համաճարակ մը ծագեցաւ. անոնցմէ ումանք, կ'ըսէ ընդհանուր կառավարիչը, գողութեան և թալանի տուին իրենց իրենք, այդպէս աւելցնելով աւագակութեան արդէն գոյութիւն ունեցող շարիքները: Թիւրք կառավարութիւնը դիւրացուց անոնց գաղթումը եւ չ'ուզեր զանոնք ետ ընդունիլ առանց անցադրի, զոր սովակայն թիւրք հիւպատոսները կը մերժեն տալ, մինչդեռ շատեր ալ պարսկական սահմանազխէն եկան պարսիկ անցադրերով: Երբ Պ. Նէլիտօֆ դեռ Կ. Պոլսոյ գեսպան էր, Կովկասի ընդհանուր կառավարիչը իրմէ խնդրեց միջամտել որպէս զի այդ գաղթականութեան շարժումը արգիլուի, բայց Պ. Նէլիտօֆ մերժեց, ըսելով թէ Արեւելքի բրիտանականներուն նկատմամբ Ռուսիոյ աւանդական քաղաքականութեան հակառակ պիտի ըլլար հայ գաղթականները վերադարձնել իրենց աւերակ տունները եւ գրեթէ ստոյգ մահուան գիւղը: Կալիցին իշխանը կը գատէ թէ հանգամանքները անկից ի վեր բոլորովին փոխուած են: Խոյրամական մտեւանդութիւնը բոլորովին մարած է, եւ «նոյն ինքն Հայերուն յեղափոխական իրարանցումն է միայն որ կ'արգիլէ բարեկարգութեան կատարեալ վերահաստատումը օսմանեան նահանգներուն մէջ:» Նոյն ինքն Հայոց Կաթողիկոսը ընդհանուր կառավարչին աջակցութիւնը խնդրած է եւ ղրկելու համար այդ չուառ փախստականները, որոնց ներկայութիւնը Անդրկովկասի մէջ՝ տեղական հայ ազգաքնակութեան ապրուստի չնչին միջոցներուն վրայ կործանարար բեռ մըն է: Դարձեալ, այդ գաղթականները զազտնի հայ գոմիթէներուն նպատակներուն կը ծառայեն՝ յեղափոխական գրուածքներ ներածելով և ցրուելով: Անոնց մէ մասնք ջանահնար եղած են երկրին մէջ ոտքերնուն տեղ մը ընել՝ Ռուսահայու հետ ամուսնանալով, հող գնելով եւ ուսական հպատակութիւն ձեռք բերելով:

Կալիցին իշխանը կը կարծէ թէ Ռուսիա Արեւելքի բրիտանականներուն բարեկեցութեանը համար իր ունեցած անյեղի հոգածութեանը լիուլի ապացոյցը պիտի տար՝ Թիւրքիայէն պահանջելով որ զարձող Հայերուն հտտայ իրենց հողերը: Հետեւաբար կ'առաջարկէ անոնց մեկնումը դիւրացնել, զանոնք գերժ կեցնելով սովորական ձեւակերպութիւններէն, եւ գարնան բռնի միջոցներ ի գործ գնիլ՝ բոլոր ետ մնացողները վճարելու համար: Անոնք որ ճամբու ծախքը վճարելու կարողութիւն չունին, օգնութիւն ստանալու են նպաստի համար հանգանակուած գրամէն: Ամբողջ Ռուսիոյ մէջ Հայերը 18000 բուլլի հաւաքած են, թէպէտ ո'չ իրենց հայրենակիցները Թիւրքիա ետ ղրկելու նպատակաւ: — Այս հատուածին դիմացը Չարը ծանօթութեամբ մը այս խնդրին մասին աւելի մանրամասն տեղեկութիւններ կ'ուզէ:

Այս տեղեկագիրը գրուելէն ի վեր, Կ. Պոլսոյ ուսական նոր գեսպանը, Պ. Չինովիւկ, ինքն ալ առարկութիւններ բրաւ Թիֆլիսէն առաջարկուած շատ խիտտ միջոցներուն վէմ, եւ հայ գաղթականներուն դարձին պայմանաժամը երկու տարուան համար երկարաձգուեցաւ:

Ատկից ետքը, ընդհանուր կառավարիչը անխնայ կերպով կը յարձակի Կովկասի Հայոց բոլոր բարեգործական ընկերութեանց վրայ, զորոնք կ'ամբաստանէ թէ շատ աւելի ուշադրութիւն կը նուիրեն քաղաքականութեան քան բարեգործութեան: Չանազան մասնաւոր օրէնքներ գրուած են՝ կառավարութեան հսկողութիւնը հաստատելու համար այդ ընկերութեանց վրայ, և պաշտօնական ճշգրտում՝ անոնց հաշիւներուն եւ գործառնութեանց վրայ, ինչպէս նաեւ տեղական իշխանութեանց արտօնութիւն տրուած է գանձեր լուծելու հրր ամենապայգն կերպով շեղին իրենց հիմնական կանոնադրին մէջ գծուած օրինական շաղկն. բայց այս բոլոր անօրինութիւնները փափաքուած արգիւնքը աւուած չեն, կամ շատ բիշ: Օրինակի համար Կովկասի գրեթէ բոլոր քաղաքները օժանդակ մասնախումբերով կապուած են այդ ընկերութիւններէն մէկուն հետ որուն կիցորնր թիֆլիս է եւ որուն նպատակն է, ըստ երեւոյթին, «կրթութիւն եւ նիւթական օժանդակութիւն տարածել Կովկասի Հայոց մէջ»:

Կալիցին իշխանին կարծիքով, այդ ընկերութեան բուն նպատակն է «լուսաւորութիւն տարածել՝ ազգային անձուկ սփռով»: Իշխանը կ'ըսէ թէ այդ ընկերութիւնը մէկ բանի տարի առաջ մասնակցեցաւ Ռուսիոյ Հայոց զարգացած գասակարգերուն ազգային անկախութեան շարժումին, «որուն ազգեցութեան ներքեւ Երեւանի գասական գիմնազիտին անօրէնը նախատուեցաւ Հայէ մը»:

Գաղանի տեղեկութիւնները ցոյց կուտան թէ ինքնազուտի ըլլալու շարժման կուսակիցներէն շատը միանգամայն անգամ են այդ ընկերութեանց, եւ թէ անոնց գրամը յաճախ կը գործածուի արտասահմանի վարժարաններուն մէջ հայ ուսանողներ պահելու: Ասիկա անշուշտ հակառակ է «ուս կառավարութեան պետական սկզբունքներուն», որոնք ներկայ պարագային մէջ կրնան համառօտակի նըկարագրուիլ իբր քաղաքականութիւն մը որ կ'ուզէ բռնազատիլ Ռուսիոյ բոլոր ոչ-սլաւ տարրերը որ ուսուսուող վրային ստորին աստիճանին ցածնան հաւասարին:

Ընդհանուր կառավարիչը կը շարունակէ. «Առանց ընդհանրապէս մերժելու կրթական գործին մէջ անհատներու եւ ընկերութիւններու աջակցութիւնը, բաւ է որ կատարեալ վստահութեան արժանի ըլլան, ես կը գտնեմ որ այս հայ ընկերութիւնները վստահութեան արժանի չեն, իրենց ազգային այլամերժութեանը պատճառաւ, երն»:

Անհատներու եւ ընկերութիւններու աջակցութեանը ակնարկոյ յիշեալ տողերուն զիմաց, Կայսրը կը գրէ. «Որոշակի գծուած սահմաններու մէջ միայն»:

Ի վերջոյ, Կալիցին իշխանը Չարին խորհուրդ կուտայ Կովկասի այդ բոլոր ընկերութիւնները գոցիլ եւ ջնջել: Եթէ Հայերը միշտ կը փափաքին աջակցիլ բարեգործական եւ կրթական ուսական նպատակներու, թող անգամակցին ընդհանուր բնոյթ ունեցող ուսու ընկերութիւններու, «որոնք ցեղային եւ կրօնական ձգտումներէ զերծ են»: Եթե տակը, այս օրինակ ձգտումներէ զերծ ըլլալու հետաքրքրական օրինակ մը կուտայ նոյն ինքն այս տեղեկագիրը:

Կայսրը կը գրէ այս տեղ. «Շատ խնամքով ուսումնասիրուելիք կ'էմ մըն է աս»:

Այնուհետեւ ընդհանուր կառավարիչը երկարօրէն կը բացատրէ տեղական վարչութեան թերութիւններն ու պէտքերը, մեծամեծ դատարարութիւնները որոնց յաղթելու է, հոգային օրէնքներու բարարման ստիպողականութիւնը: Կալիցին իշխանը կ'ըսէ թէ հարկ անհրաժեշտ է ընդհանուր կառավարչին արտօնել որ մասնակցի ծրագիրներու նախարարական խորհրդակցութեանց ի Բեկրպուրի: Քիւրական գատարաններ կամ գատարներ եւ կառավարական հսկողութիւն չկայ: Ամէն բան թողուած է զիւղպետներու եւ հաշտարարներու ձեռքը, որոնց բնոր շատ ծանր է: Երկու տարի առաջ բարենորոգման ծրագիր մը ներկայացուեցաւ ներքին գործերու նախարարութեան, բայց անկից ի վեր այդ պաշտօնատանին գործ կ'լաւ չունի: Պաթումի, Կարսի եւ Արցունիի գաւառակներուն մէջ, ո եւ է տեսակ զիւղական վարչութիւն չկայ, եւ հոգին ու տեղական սովորութեանց հետ կ'ապ ունեցող քաղաքներ կ'ընտան խնդիրներ ու մէծեր լուծումի մը կը սպասեն: Ընդհանուր կառավարիչը արտօնութիւն կը ինչորէ այդ ամբողջ խնդիրները կարողազրելու իր թիֆլիսի յատուկ խորհրդին մէջ, ըստ որում Բեկրպուրի Սենատը շատ գանգաղ է: Չարը կը գրէ թէ «ատոր դէմ ըսելիք մը չունի»:

Ընդհանուր կառավարիչը կուզայ վերջին հարուած մըն ալ ապ քաղաքական Հայերուն, սրովհետեւ շատ կշիռ ունին քաղաքային գործերու մէջ: 1892ի օրէնքը ամէն բան կ'աղմալուծած է: — Չարը այստեղ բիշ մը յուսահատօրէն կը գրէ. «Այդ զգաւոր քաղաքային օրէնքը»:

Ըստ որում քաղաքային խորհուրդները ըստ օրինի կ'ընտարուին կալուածատիրութեան հիման վրայ, եւ ըստ որում Անդրկովկասի քաղաքներուն մէջ բնակչութեան կալուածներուն մեծաւոյն մասը Հայերուն սեփականութիւնն է, հետեւանքը ան կ'ըլլայ բնականաբար որ բոլոր քաղաքային խորհուրդները իրենց ձեռքն են:

Թիֆլիսի քաղաքային խորհուրդը 79 անգամ ունի, որոնց 56ը Հայ են, որ է ըսել ամբողջութեան հարիւրին 70ը, թէպէտ Հայերը քաղքին ամբողջ բնակչութեան հարիւրին 40ը միայն կը կազմեն:

Ու Կալիցին իշխանը կը գանգատի թէ քաղքին համար բան մը բրած չունին՝ հակառակ տարեկան մէկ միլիոն բուպիլին աւելի ելմտացոյցի մը, յատուկաւ զէշ է, ջուրը յաճախ կը կարի, Կուր զետը պարբերաբար կ'ողողէ քաղքին ինչ ինչ մասերը, եւայլն եւայլն: Ճիշդ նոյն գանգատները կան ամէն օր Բեկրպուրի՝ Կայսրութեան առաջին քաղաքային խորհրդին դէմ, որ սակայն, կարծենք, ո'չ մէկ Հայ սնի իր անգամներուն մէջ: Բայց բազմատեղիները աւելորդ է: Կալիցին իշխանին միակ նպատակն է Կովկասի քաղաքները զերծ պահել Հայերուն այս գեղալի յազդեցութենէն, որ օր օրի վտանգաւոր գտնալու վրայ է: Ընդհանուր կառավարիչը հետեւաբար խորհուրդ կուտայ որ կառավարութիւնը ինք անուանէ քաղաքապետները եւ ինք սրուշէ անոնց ստանալիք թոշակը քաղաքա-

յին սնտուկէն . թէ քաղաքային խորհրդականները ընտրուին նոր կանոնադրութեան մը համաձայն , իշխանութեանց հսկողութեանը ներքեւ , եւ թէ կառավարիչները իշխանութիւն ունենան պաշտօնանկ ընելու խորհրդին այն անդամները որոնք պատշաճօրէն չեն կատարեր իրենց պարտականութիւնը : — Այս խորհուրդին պիտացը լուսանցքին մէջ Չարր կ'ըսէ . « Այս անօրինութիւնները բաղձալի կը թուին ինձի . բայց պէտք է նախ կատարելապէս ուսումնասիրուին : »

ՈՒՐՈՒԱԿԱՆԸ

Իշխան կալիցիին տեղեկագրին հրատարակութեամբը թայմզ նշանաւոր ծառայութիւն մը մատուց մեզի . Աչքերնս առ առջեւ ունենալով յատակապիժ մը որ մանրամասն կը պարզէ Հայութեան ջնջուած ապահովելու գաղտնի գիտումները , ա՛յ կրնանք գիտակցօրէն մտածել ինքնապաշտպանութեան միջոցներուն վրայ :

Կալիցիին ծրագիրը խորհելու բազմաառ նիւթ կը մատակարարէ . սակայն առ այժմ անոր կարեւոր մէկ կէտը միայն պէտք է անմիջապէս գրաւ մեր հանրային ուշադրութիւնը : Ռուսական իշխանութիւնը կոմկասեան Հայերը ջախջախելու էն վստահելի երաշխաւորութիւնը աւսնոց տնտեսական վիճակին քարուքանդումէն կը սպասէ . — նոր գաղափար մը որուն հաւանօրէն շատ սպասողներ չէին գտնուեր : Չարին հպատակ այլասեռ ու այլակրօն ամէն ցեղերը ուսական խմորով թրծելու համար կողկասեան վարչութիւնը մինչեւ հիմա անոնց տոհմային ինքնայատկութիւններուն արիւնը ծծել կը տքնէր . անտեսական բարգաւաճումի պայմանները կը մնային անվտանգ : Ամէն անհատ , ինչ ցեղի ալ պատկանէր եւ ինչ ալ գաւանանքի , կրնար հարստանայ միեւնոյն օրէնքին պաշտպանութեամբը : Հայը , Վրացին , Թիւրքը ո՛չ թէ իբր Հայ , իբր Վրացի , իբր Թիւրք , այլ իբր ուս քաղաքացի կը բարեօրէն իրենց նիւթական վիճակը : Այսպէս Հայը եթէ կարող եղած է Պաքոսի նաւթային հանքերէն մեծապէս օգտուիլ , նոյն բազաւարութեան մասնակից եղած է Թիւրքըն ալ , Եւրոպացին ալ : Հիմա իշխան կալիցիին կ'ուզէ որ Հայերը զրկուին իրենց աշխատութեամբը եւ խելքովը հարստանալու հնարաւորութիւնէն : Հարստութիւնը ցեղային մեծահարկի պիտի վերածուի :

Չենք կրնար գուշակել կոմկասի կառավարչապետին ձեռք առնելիք միջոցները , որոնցմով պիտի յաջողի շուտով աղքատացնել Հայերը : Հնարագիտ միտք մը , երբ իր տրամադրութեանը տակ ունի բոնապետական իշխանութեան մը հայթայթած ամէն զիւրութիւնները , կրնայ շատ մեծ շարիքներ հասցնել հպատակ փոքրաթիւ մողս վերդի մը . մեզի համար կարեւորը այն է թէ կոմկասը զը

բառող Ռուսը , որ օտարական մըն է , աչքերը տնկած է աշխատասէր բնիկ ժողովրդին հարստութեանը վրայ , յար եւ նման սուլթան Համիտին : Ան ալ կը շարանար թէ ինչո՞ւ բազաւարութեամբ իսլամներուն Հայերը քիչ մը աւելի լաւ տնտեսական վիճակ ունին : « Թիւրքերը աղքատ են եւ Հայերը հարուստ » կը գանդատէր Համիտ Անգլիոյ գեպպանին : Այդ սեւեռեալ գաղափարը արիւնի եւ կրակի սովով քիչ մը կակուղցաւ : Բայց Թիւրքիոյ մէջ ազգային ամէն ծանր աղէտ բարեկարգութեան սկզբնաւորութիւնն է . իսկ Ռուսիոյ մէջ՝ բարեկարգութեան վախճանը :

Ինչպէս ցայգաթիթեօր սր միշտ դէպի լոյսը կը գառնայ , Թիւրքիոյ Հայն ալ միշտ դէտակն կը մնայ ոսկի լոյսին որուն փայլը կ'ընդնշմարէ Արարատէն անդին : Իր ուսուհպատակ եղբօրը տնտեսական զարդացումը եւ հանգրատաւա կենցաղավարութիւնը բարկ արեւի մը ճառագայթներուն պէս ամէն ատեն խողտեցուցեր են թրքահնդպատակին աչքերը , ծածկելով անոր նայուածքէն ազգայնութեան սրտին համար սրուած դաշտնները :

Հիմա՝

Հիմա Հայոց նկատմամբ Ռուսիոյ տնտեսական նոր քաղաքականութիւնը պէտք է մեզի համոզէ որ Հայաստանի վրայ ուսական ախրապետութեան հաստատուած օրը Հայը ոչ միայն բարոյական այլ եւ նիւթական կեանքին մէջ պիտի խորտակուի , ջախջախուի , լմնայ : Կալիցիինեան ծրագրէն յայտնի կը տեսնուի թէ Բեղրպուրկի կառավարութիւնը շարաշար զղջացած է որ Հայոց տնտեսական յառաջացումին դէմ խափանարար արգելքներ յարուցած չէ կոմկասի աշխարհակալութեան առաջին օրէն իսկ : Այսօր Ռուսերը շարիք մը կը համարին Հայոց բարեկեցիկ վիճակը եւ անոնց կործանումին մէջ կը փնտռեն շարիքին գարմանը : Կալիցիինեան խորհուրդներուն իրականացումը անկարելի բան մը չէ , բայց բուսական ալ գծուար է :

Դարէ մը ի վեր է որ կոմկասի տնտեսական դրութիւնը օրէ օր բարեօրեւելով զետեղուեցաւ հաստատուն հիմքու վրայ . հիմա քարերուն մէջ են եւ Հայերն ալ : Իիւրին գործ չէ հայկական քարերը վրացականներէն , ուսականներէն անջատել գուրու հանել . շէնքը ամբողջապէս կը խախտի . բայց եւ այնպէս այդ յանգուզն փորձը ընելու գաղափարը յղացուած է : Անդին թրքական Հայաստանը արդէն տնտեսապէս տւեր աւերակ է . պէտք է հողը հարթել եւ անոր վրայ բարձրացնել տնտեսական նոր շէնքը : Բնականաբա : Ռուսերը երբեք պիտի չուզեն նորէն կըրկնել ինչ որ կը կարծեն թէ սխալ մը եղաւ կոմկասի տիրապետութեան ատենը : Սրբագրութիւնը վերջէն գծուար պիտի ըլլայ : Որպէս զի ետքէն գործը հեշտ ըլլայ , առաջուց պիտի ուզեն հետեւիլ այնպիսի քաղաքականութեան մը որով Հայերը աղքատ , թշուառ , ողորմելի պահեն : Մեր ձեռքը ո՛չ վաճառականութիւն մնայ , ո՛չ երկրագործութիւն , ո՛չ ճարտարագործութիւն : Ռուսիա այսօր գրեթէ մէկ միլիոն Հայ ունի , եւ արդէն անոնց դէմ ակոյ կը կճրտէ . երբ Թիւրքիոյ Հայաստանին ալ տիրէ , այդ

Թիւր երեք միլիոնի պիտի բարձրանայ. ու այնքան Ռուսերը աւելի պիտի չարանան այդ հոծ հայութեան գէմ եւ պիտի ուզեն ամէն միջոցներով ջլատել, անգամալուծել, ցիր ու ցան ընել մեզի:

Երբ խօսեցանք ձարին հպատակ զանազան ցեղերուն նկատմամբ ուսական կառավարութեան հետեւած քաղաքականութեան վրայ, ըսինք թէ Հայուն հետ Վրացին ալ, Ֆինլանտացին ալ, Բուլղարացին ալ կը հալածուին իրենց կրօնքին, լեզուին, ցեղային յատկութիւններուն մէջ: Բարոյական հալածանքը հաւասարութեան օրէնքով կը գործադրուի. Հայերը ընդհանուր ազգային մասնակից են ո՛չ թէ իբր հայ այլ իբր ոչ-ուս: Բայց ահա հիմակ տնտեսական հալածանքին մէջ հաւասարութեան պայմանը կը ջնջուի. Հայը ոչ թէ իբր ոչ-ուս, այլ իբր Հայ կը հալածուի տնտեսապէս, վասն զի միւս ոչ-ուսները, օրինակ Վրացին կամ Թիւրքը, կը մնան անձեռնմխելի: Եւ իբաւ ալ եթէ ուս կառավարութիւնը միւս ցեղերուն ալ տնտեսական բարգաւաճումը արգիլել ուզէ, այն ատեն ամբողջ երկիրն է որ պիտի աղքատանայ, պիտի թշուառանայ: Ռուսիոն ուսահպատակ Հայը երկու տեսակ հալածանքի ենթարկուած է. նախ՝ իբր ոչ-ուս իր բարոյական կեանքին մէջ կը հալածուի, միւս ոչ-ուս ցեղերուն հետ մէկտեղ. յետոյ՝ իբր Հայ ալ առանձնաբար կը հալածուի իր տնտեսական կեանքին մէջ:

Եւ ինչո՞ւ այս մասնաւոր հալածանքը: Հայերը Ռուսերուն թշնամիներն են, ո՛ր եւ է ապստամբական շարժում կը մտաբերին: Բնաւ: Եոյն իսկ Հայոց արիւնարբու թըշնամին, Կալիցին իշխանը, կ'ընդունի թէ Հայերը մտքերուն չեն անցըներ Ռուսիայէն անջատուելու պաղափար մը: Ու արդարեւ Ռուսիոյ Հայերը բաւական խելք ունին և իրենց շահերը ըմբռնած են, ուստի ապստամբութեան գաղափարը մտքերուն իսկ անցընելու տխրութիւնը չեն ըններ: Ընդհանուր Ռուսիոյ բարգաւաճումէն կը սպասեն իրենց ալ զարգացումին էական պայմանները:

Եւ սակայն կը հալածուին իբր Ռուսիոյ թշնամիներ:

Ու այս ամէնը տեսնելով իրաւունք չունինք անգամ մը ճա կրկնելու ինչ որ այս Լջերուն մէջ ըսինք. «Ան առտուն որ Ռուսը Հայաստան մտնէ, ան իրիկունն ալ Հայաստանի արեւը իր մարը պիտի մտնէ:»

Մթութիւնը արդէն կը տարածուի Կովկասի վրայ. ու հոն կը նշմարենք մեր ապագային սարսաղագեցիկ ուրուական ալ: Ռուսականը կը յառաջանայ, պաշտպանենք ինքզինքնիս:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ԵՒ ՉԱՅԵՐԸ

2

Պ Ա Ր Ս Կ Ա Հ Ա Յ Ե Ր Ո Ւ Ն Ն Ե Ր Գ Ա Ն

Ժամանակ մը Պարսկահայերը Հայութեան ամէնէն ետ մնացած մասը կը համարուէին. եւ իրօք ալ այդպէս էր: Սակայն ազգային շարժման հետեւանքով Պարսկաստան ապաստանած թարմ ու եռանդուն երիտասարդ ոյժերը մղում մը ներշնչեցին այս թմրած զանգուածին, մղում մը դէպի յառաջդիմութիւն, դէպի գիտակցութիւն: Տիրապետող ոյժը խուսար էր, եւ այդ խուսարը կը տարածուէր ամբողջ հպատակ տարրերուն վրայ: Դէպքերուն եւ գործերուն ցնցումը շարժեց Պարսկահայը, եւ այսօր ընդհանուր Հայութեան մէջ մխիթարական ու յուսատու տարր մը կը ներկայանայ ան:

Պարսկահայը ցեղային լաւագոյն առաքինութիւնները կը պահէ իր մէջ: Պապինական հիւրասիրութիւնը հոս մնացած է ամէնէն աւելի արմատացած. Կժրախտ հանգամանքներուն ժամանակը, ան գիտցաւ իր սեղանին ընկեր ընել իր թշուառ եղբայրը: Յեղային բարձրագոյն ընդունակութիւնները լիսլի ունի. տուած է հանրային գործիչներու եւ զբաղէտներու փայլուն շարք մը, Աբովեան, ըՍտեփաննոս Նազարեան, Բաֆֆի, Միկտիչ Էմին եւ ուրիշներ, առանց յիշելու անցեալին նշանաւոր զարմերը ուրոնք աւելի ուրիշ հօրիզոններու տակ փայլեցան: Չենք ուզեր կրկնել նաեւ Արեւելքի վաճառականութեան մէջ Պարսկահայուն ունեցած մեծ գերը, որու մասին քանիցս զրուեցաւ արդէն այս սինակներուն մէջ:

Պարսկաստանի բուռ մը հայ ժողովուրդը, ահագին մտնանդ ամբոխի մը մէջ որչափ որ պահած է իր ազգայնական յատկանիշներն ու նկարագիրը, բայց չուրանանք որ պարագաները ստիպած են զինքը արմատացնել պարսկական խորամանկութիւնը ու շողոքորթութիւնը, շրջապատին յարմարելու համար: Երեւի ասոր հետեւանքն է որ հոս հայ ազգայական պատկարը տիրող ոյժ մըն է: Խորամանկ ազան կ'իշխէ, իսկ ժողովուրդը շողոքորթութեամբ անոր կը հպատակի, առանց իր տեղահանութիւնը յայտնելու քաջութիւնը ունենալու: Ազգային պաշտօնեան, հոգաբարձուն միշտ ազան է, յաջորդը իր խնամին: Տեսնուած չէ՛ հոս որ հասարակ զստակարգին պատկանող անգամ մը ազգային պաշտօնեայ ընտրուի: Սալմաստ առաւելութիւն մը կը ներկայացնէ թաւրիզի վրայ. հոն ազգային գերը նուազած է:

*

Անցնելով Պարսկաստանի Հայուն հանրային կեանքին, իր թէ՛ մխիթարական եւ թէ՛ ցաւալի կողմերը ունի:

Ատրպատականի կրթական գործը անուրանալի է որ ժա-
մանակ մը աւելի նախանձեղի էր քան այսօր, մանաւանդ
Սալմաստ ակներեւ յետադիմութիւն մը ցոյց կուտայ:
Հանգուցեալ Մկրտիչ Աւետիսեան Սալմաստի առաջին եւ
վերջին տեսուչը եղաւ, որուն օրով սկսաւ Սալմաստի մը-
տաւոր շարժումը. կանոնաւոր երկրասեան ուսումնարան-
ներ բացուեցան, թատրոնի եւ պարոցի նոր շէնքեր կա-
ռուցուեցան, պարբերական ներկայացումները ժողովրդին
միտքը կրթելու ծառայեցին. Հաւթիւնի «Գրասիրաց մի-
ութեան» եւ Փայաշուկի «Բաֆֆի» դրագարանները հիմ-
նուեցան եւ կը շարունակուին այժմ: Այդ ատեն էր Սալ-
մաստի մէջ «Կեդրոնական» վարժարան մը հիմնուելու
հարցը ծագեցաւ. պարսկահայ հարուստ մը թեմական
տեսչին յորդորմամբ կարելոր զուժար մը կաթողիկոսին
տրամադրութեան տակ զրաւ այդ նպատակին համար:
Սակայն դէպքերուն բերմամբ, Աւետիսեան հեռացաւ Սալ-
մաստէն, եւ իր աւաղելի մահը իրեն հետ գերեզման տա-
րաւ «Կեդրոնական» վարժարանի հարցը: Վերջերս Սալ-
մաստի առաջնորդական փոխանորդ Խաչիկ վարդապետ
այդ պատրաստ զուժարով ձեռնարկեց զպրոցին կառուց-
ման, բայց նոր շինութիւնը «բերդ» համարուելով արգիլ-
ուեցաւ: Սալմաստի պարոցներուն թիւը այժմ պակասած է
եւ շատ մը ուսուցիչներու կարօտութիւն կայ:

Թաւրիզի պարոցներու կանոնաւոր շարունակութիւն մը
ունի շնորհիւ ապահով նիւթական կացութեան մը, ան
ալ դժբաղդաբար ուսուցչական խմբերու անընդհատ փո-
փոխութեան ախտով վարակուած է: Հոս Հայոց երկսեռ
երկու պարոցներ կան, Արամեան՝ միջնակարգ եւ Ս. Ան-
նահան պարոցները Ղալա թաղի մէջ եւ Հայկազեան ու
Թամարեան երկրասեան պարոցները Լիւալա թաղին մէջ:
Երկսեռ պարոց մըն ալ ունին բողոքականները: Ատրպա-
տականի միւս կողմերը զրկուած են պարոցներէ, կամ առ-
զին անզին գտնուածները շատ խեղճուկրակ տիրացուա-
կան ծաղկոցներ են: Ընդհանուր հաշիւ մը ներկայացնե-
լով, Ատրպատական անցեալ 98 ուսումնական տարուան
շրջանին մէջ ունէր 30 ուսումնարան, 47 ուսուցչով եւ
1245 աշակերտներով: Աշակերտներուն թիւը բազմաթե-
լով բնակչութեան թիւին հետ, տիւր երգրակացութեան
մը կը հասնինք: Թաւրիզ միայն այդ կողմէ միտքարա-
կան է, 380 տուն հասարակութիւնը ունի 730 աշակերտ-
աշակերտուհի: Հոս փոքր տղաքները առհասարակ պարոց
կը յաճախեն, ո՛չ ուրիշ տեղերու նման փողոցները թա-
փառողներ կան եւ ո՛չ ալ արհեստաւորներու մատաղ աշ-
կերտներ. այդ ալ գուցէ այն պատճառաւ է որ հոս հայ
արհեստաւորներու թիւը շատ քիչ է: Սակայն Թաւրիզէն
շարունակական գանձատ մը կը լսուի. Արամեան պարոցը,
որ հիմնուած է շրջականերուն համար ուսուցիչներ պատ-
րաստելու նպատակով, ցայսօր միայն վաճառականի լաւ
զրագիրներ է տուած, որոնք աւելի գործ կ'ունենան կող-
կասի մէջ քան իրենց հայրենիքը, մինչ անոր օգտին պէտք
է նուիրուած ըլլային:

Թաւրիզի երկու թաղերն ալ ունին մէկ մէկ մանկա-

պարտէզ եւ կանանց արհեստանոց, ուր վերջերս քորզ քոր-
ծելու դաս ալ մտցուցած են. այս ճիւղին ուսուցչուհիները
Պարսկուհիներ են: Սոյն հաստատութիւնները կը պատ-
կանին կանանց բարեգործական երկու ընկերութեանց:

Ատրպատականէն գուրս Թէհրան ունի «Հայկազեան»
անունով նախակրթարան մը, Ռաշա երկրասեան պարոց
մը, եւ Չուլա հին, մաշած, զրաբար վարժարան մը ուր
դեռ կը գործեն վաղնջուց ուղղական-սեռականը եւ ընկե-
րակից Ֆալախան:

Պարսկահայերը մինչեւ այսօր առանձին գրականու-
թիւն մը չեն ունեցեր: «Շաւիզ» եւ «Ասող Արեւելեան»
երկու շաբաթաթերթ հրատարակուեցան Թէհրան, որոնք
շատ կարճ միջոց մը միայն կրցան շարունակել, եւ ահա-
զին պարտքերու տակ ինկած՝ փակել ստիպուեցան: Պատ-
ճառը այնքան ժողովրդին անընթերցասիրութիւնը չէր,
որքան այդ թերթերուն խեղճուկրակ խմբագրութիւնը: Ե-
թէ այժմ լաւ ուժերով ձեռնարկ մը ըլլայ Պարսկաստանի
մէջ նոր լրագիր մը հրատարակելու, յաջողութիւնը ան-
խուսափելի է: Թաւրիզ ունի տպարան, — հանգուցեալ
Ստեփանոս եպիսկոպոս Մխիթարեանի հիմնած —, որ կը
ծառայէ միայն յայտարարութիւններ տպելու: Թաւրիզի
մէջ նոր ձեռնարկ մը ընելու կարող ոչ ոք չեն պակսիր:

Պարսկահայերուն էն պատուաբեր եւ յուսատու հաս-
տատութիւնն է Թաւրիզի կանանց բարեգործական երկու
ընկերութիւնները: Պարսկահայ կինը, հարէմի եւ թանձր
քօղի տակ ծածկուած հայ կինը, այսօր գուրս եկած այդ
մթութեան մէջէն, հրապարակի վրայ ոքանչելի գործ մը
կը կատարէ: Թող շուրջ գովեստ մը չհամարուի, եթէ
զաննք անուանեմ այս արիւնտ օրերուն, վերաւոր բա-
զուկներուն վիրակապ կապող հայ կինները: Օգնել հալած-
ուածներուն, տարիներով կերակրել ու խնամել հարիւրա-
ւոր զաղթական ընտանիքները, ձիւն ու բուք օրերուն
Թաւրիզէն օրերով ճամբորդել դէպի Սալմաստ՝ հոն իրենց
աչքովը տեսնելու եւ իրենց ձեռքովը նպաստ բաշխելու
զժբալլութեան զոհերուն, օգնել կրթական գործին, զըպ-
րոցի պակասած նիւթականը հայթայթել, աղքատ աշա-
կերտ—աշակերտուհիներ խնամել, որդեգրել, մանկապար-
տէզ հիմնել, արհեստանոց բանալ՝ պարսկահայ կնոջ ձե-
ռագործ սորվեցնելու համար, — ասոնք ամէնը այնպիսի
գործեր են որ մեծագոյն յոյսերը կը ներշնչեն հայ կնոջ
ձգտումներուն մասին: Հայ կնոջ շարժումը, հայ ցեղին էն
բարձր շարժումն է: Երբ մեր մէն մի գործի մէջ երեւայ
հայ կնոջ ձեռքը, այն ատեն Նալբանդեանցի կը ձայ-
նակցինք. «Չէ՛, թշուառ չէ՛ Հայաստանցին» կանանց
բարեգործական այս ընկերութիւնները այնչափ կշիռ ու-
նին Ատրպատականի մէջ որ անցեալ տարի ձեռնարկե-
ցին էրիկ—մարդոցմէ «Աղքատախնամ» ընկերութիւն մը
հիմնել, խոստանալով 300 թուման (1500 ֆր.) զրամա-
զուլս տալ, սակայն չենք գիտեր թէ այս ընկերութիւնը
ինչո՞ւ չկազմակերպուեցաւ, քանի որ գործին մէջ կային
եւ արժանայարգ անձնաւորութիւններ: Երեւի պարսկահայ
կինը աւելի գործել զիտէ՞քան տղամարդը:

Ուրիշ կանանց բարեգործական ընկերութիւն մըն ալ կայ Սալմաստի մէջ Ղալսասարի խաթուններէն կազմուած, յայտնի չէ՛ մեզ թէ ինչո՞ւ ասոնք ալ իրենց ջոյրերուն նըման օրինակելի գործեր ցոյց չեն տար:

Ատրպատականի զանազան կողմերը, Թաւրիզի մէջ շատ մը ընկերութիւններ կազմուած ու լուծուած են կամ կան, բայց ամէնէն աւելի աչքի կ'իջնայ Թաւրիզի «Լըսարանական» միութիւնը: Այս ընկերութեան օրինակը բողոքական փոքրիկ հասարակութիւնը տուաւ: Փոքրիկ ընկերութիւն մըն էր, որ 15 օրը մէկ անգամ դասախօսութիւններ կուտար, անդամներէն մէկուն տունը, պարզ ընտանեկան երեկոյթի մը ձեւով: Ապա Լիւալայի ուսուցչական խումբը ձեռնարկեց Հանրային դասախօսութիւններ տալ եւ գիշերուան դպրոց բանալ չափահասներու համար: Անցեալ տարի փետրուարին Առաջնորդարանին մէջ ժողով մը գումարուելով գործը աւելի ընդարձակ ծաւալ ստացաւ եւ կազմակերպուեցաւ նոր ընկերութիւն մը: Այս «Լսարանական» ընկերութիւնը հարիւրէ աւելի անդամներ ունի եւ ամէն ութ օրը մէկ անգամ՝ դասախօսութիւններ կ'ըլլան երբեմն մէկ, երբեմն միւս դպրոցի թատերական սրահին մէջ: Դասախօսութեանց նիւթերը գիտական, գրական, պատմական եւ բարոյական են եւ մասնագիտօրէն մշակուելով կը կարգացունեն, ապա միճաբանութեան կ'ենթարկուին: Ընկերութիւնը մտադիր է, իր նիւթական ոյժերը ներածին պէս, հաւաքաբար կամ պարբերաբար հրատարակել զանոնք: Արդէն դասախօսութեանց պատճէնները ընկերութեան արձանագրութեանց մէջ կը պահուին:

Լսարանական ընկերութիւնը Պարսկահայուն մտաւոր շարժման փաստ մըն է, մանաւանդ որ ունկնդիրները երկսեռ հոծ բազմութիւն մը կը կազմեն եւ ընկերութիւնը ունի շատ մը անդամուհիներ: Ընկերութիւնը անշուշտ մեծ ծառայութիւն մը կը մատուցանէ Թաւրիզի հասարակութեան եւ կոչուած է ուրիշ գործեր ալ կատարելու: Յանկալի էր որ լսարանը իր ճիւղերը տարածէր շրջակայ գաւառները, որ շատ աւելի անհրաժեշտ պէտք կայ դարգացման միջոցներու:



Լսարանէն աւելի հասարակութեան կրթիչը թատրոնն է, եւ Պարսկահայերը զրկուած չեն ներկայացումներէ. թէ՛ Թաւրիզ, Սալմաստ, Ուրմի եւ թէ՛ ուրիշ տեղեր շարունակ ներկայացումներ կան: Թաւրիզի երկու թաղերը եւ Սալմաստի Հաւթիւան գիւղը ունին իրենց թատրոնական ընդարձակ սրահները, բեմական յարմարութիւններով հանդերձ: Հասարակութիւնը կը յաճախէ սիրով, եւ ամէն անգամ բաւական գումար մը կը դոյնանայ, որ առհասարակ կը յատկացուի դպրոցներուն կամ այլ բարեգործական նպատակներու:

Անցեալ ամսուն թէհրանի մէջ ներկայացման մը Եհրաներկայ գտնուելով, չափազանց գոհ մնացեր է եւ ներկայացումէն վերջ բառորդէ մը աւելի գերասանները եւ

գերասանուհիները իր ներկայութեանը ընդունելով քաջալերեր է զանոնք, յայտնելով իր գոհունակութիւնը, և կարեւոր գումար մը նուիրեր է դպրոցին, խոստանալով անգամ մը այցելել: Թաւրիզ ամէն տարի թիւրքերէն լեզուով ներկայացում մը կը պատրաստէ թագաժառանգին, հիւպատոսներուն եւ պարսիկ պաշտօնեաներուն համար, որմէ նիւթական մեծ շահ մը կ'ունենայ դպրոցը: Անցեալ տարի Վալիաթը օթեակ մը 40 թուամսի (200 ֆր) գրնամ էր, ինչպէս եւ Ամիր-Նիզամը:

Ուրախուի է ըսել որ ամէն պարագային ալ պարսկահայ օրիորդը ամենայն համարձակութեամբ բեմ կ'ելլէ:

Պարսկաստանի մէջ երեւան եկած մտաւոր այս շարժումները ցոյց կուտան մեր ցեղին կորովը, որ զիտէ ամենադժուար օրերուն ցնցուիլ, շարժիլ, կրթիլ միտքը եւ պատրաստուած ոյժերով զիմել գէպի նպատակը:

Վ. ՇԱՀԷՆԻ

«ՄԻՇԸՆԸՐԻ ՀԷՐԸՏ»ԷՆ

Այնժամպէս կը գրեն Միշընըրի Հերըտի թէ կեցրուական—Թիւրքիոյ Գոլէճին աշակերտներուն մէջ մեծ եռանդ մը սկսած է: Գիշերային վարժարան մը բացուած է, որ 40 հոգի կը յաճախեն: Գոլէճին ուսուցիչներէն մին կը դասախօսէ երկու գիշեր, եւ երրորդ գիշերը՝ վարժարանին աշակերտներէն մին: Փողոցի տղաքներուն համար ալ երեք կիրակնօրեայ վարժարան բացուած են վերջերս քաղբին զանազան կողմերը, եւ գոլէճին վասնողները կը վարեն զանոնք: Մէկ բանի ամիս առաջ Ուրֆացի ուսանող մը կ'ինկերու համար կիրակնօրեայ ժողովներ հաստատած էր: Հիմակ ան ալ կիրակնօրեայ դասարան մը կազմակերպած է մանչերու համար: Այս գործին մէջ ուսանողներուն ցոյց տուած եռանդը շատ քաջալերական է: — Աղջկանց վարժարանին մէջ, երկու բարձրագոյն կարգերուն վերաբերող հինգ աղջիկ, ոմանք Այնժամպէս և միւսները զրօսէ, Միս Ֆորմէնի ներկայանալով փափաք յայտնած են ընկերութիւն մը կազմելու, որուն մէջ իրենք պարտաւոր ըլլան, շրջանին աւարտելէ յետոյ, երկու տարի ուսուցչութիւն ընելու, ո՛ր որ ալ զրկուին: Այս բանը ընդհանրապէս կը պահանջուի ձրի կրթուող աղջիկներէն: Բայց այս շարժումը բաւորովին ինքնաբուրի է, եւ աղջիկներէն երկուքը հարուստ են:

Միշընըրի Հերըտ, խօսելով որբանոցներուն փակման մասին, զոր կը վերադրէ Հայերուն նախանձին եւ Թիւրքերուն վախին, կ'ըսէ. «Որբանոցներուն ձեռնարկը այնքան դուրս բարեգործական բան մըն է, առանց դարձելի շարժառիթներու, որ ամենակայր մուսուանութիւնը միայն կրնայ ըսելիք գտնել անոնց դէմ: Եթէ այդ որբանոցները փակուին, պատսպարեալ տղաքները անտուն պիտի մնան, զրկանքներու եւ տառապանքներու մասնուած:»

ՀԱՅ ՏԱՌԱՊԱՆՔԷՆ

ՊՈՒՏ ՄԸ ՋՈՒՐ...

Անցած օր Լոնտոնի մեծածխոք փողոցներէն մեկուն մէջ հանդիպեցայ պատանոթեան ընկերներէս Գարեգիկին: Պոչիսը ձգելէն ի վեր իրար տեսած չէինք: Անտոյգ ոչ փորորկայից կեանքի մը բնուար կոնակներէն մեկ մեկ կողմ քշուած տարուած, իրարու հետքը կորսնցուցած, չէինք գիտցած իրարու ո՛ր ըլլայր, ի՛նչ ընէր: Ոչ այս անակկալ ոչ սիրայի հանդիպումը կոչար յանկարծ բօրուէր մեզի՝ կեանքին դժուար ձանրակներուն մէջ քրոշած կիսամեռ յիշատակներուն, տժգունած երազներուն, անցեալին բոլոր մոռցուած յոյսերուն ոչ պատրաստներուն, աչքուած ոչ ստուերուստ պատկերներուն, բոլոր սիրուած ոչ հիւսկած դեմքերուն, բոլոր շացուած ոչ բարուած տեղակներուն վերջոյնունի սարսուռովը:

Որչափ փոխուած, ծերացած երեւցանք իրարու: Փողոցին մէջ, անցորդներուն ապուշ ոչ հերանու նայուածքին տակ, խանդավառ ոչ կարոզին գրկընդիսաւնուժ մը եղաւ սա որ մեր կուրծքերը միացուց կարօտի ոչ ցնծութեան հրայրքով մը, ոչ մեր սրտերուն դասն ոչ անուշ ունեցքին մէջ, պահ մը, արցունքով ոչ արիւնով սեղմուեցան, գրկուեցան, համրուարուեցան մեր երկուքին միշտ սիրական ընկերները, որոնք ո՛վ գիտի ո՛ր մեացին, ի՛նչ եղան...:

- Արտաշէ՞սը...
- Չե՛մ գիտեր...
- Լեռն՞ը...
- Չե՛մ գիտեր...
- Յովնանե՛կը...
- Ա՛խ ան մեռաւ... մեռուցի՛ն...

Պահ մը վերջը, գիկետան մը անկիւնը, երկու գաւաքի առջեւ նստած կը խօսէինք: Ուզեցի գիտնալ քե՛րք ե ի՛նչպէս Լոնտոն եկած էր: Գարեգիկ ունայ մը հռչիւքի կոչ տուաւ, սիկառք մը վստեց ոչ յոգնած ժպիտ մը երեքցնելով սխառ պատմել:

ԳՅԻ աղէտաւոր օրերուն էր որ Պոլիսը ձգեցի: Ամէն բան աչքս առած, անգլիական վաճառաբարձ նաւ մը ապաստանեցայ յուսահատութեան ու զայրոյթի իրիկուն մը, առանց դրամի ու առանց ընդունուելու ապահովութեան: Նաւապետը յանձն առաւ մինչեւ Լոնտոն փոխադրել իս, պայմանաւ որ ձամբան օգտակար ըլլայի նաւազներուն: Ուրախութեամբ ընդունեցայ: Ժամ մը վերջը շոգնաւը խարխիւր կը վերցնէր ու ես կամուրջին վրայէն Պոլիսը կը դիտէի:

Օ՛ հրաշալի ու դժոխային քաղաք. առաջին անգամ էր որ կը ձգէի զայն, ու երբեք ինձի այնքան աղուոր ու

այնքան դժուակ երեւցած չէր ան: Օտար աչքերու համար որ պիտի անցնէին անոր առջեւն՝ անիկա միշտ նոյնն էր, գիւթութեան ու խորհուրդի զանգուածը, կրկնապէս հրապուրիչ իր մեղկ, յայրատ, այլամերձ ու անթափանցելի կեանքին խոսովիչ գաղափարովը, անհունապէս հմայող իր երկնքին ու ափերուն անպարագիծ, անկարելի, յաւիտենական կապոյտովը, միշտ նոյն շուրեցնող պատկերը գաղանթի, փորձութեան, երազանքի, գինովութեան: Բայց ես այդ բոլորին մէջ, այդ բոլորը ապրած, այդ բոլորէն զուրս ելած, այդ բոլորին առջեւ գալարուած կը մնայի հիմա անձկութեան ու անկարող ըմբոստացումի ցաւազին հողիսով մը:

Ետիս վերջալստի արիւնտ ու եղբրական հորիզոն մը կը թուէր աչքերուս շեշտել վիթխարի զարհուրանքը որ կը սաւառնէր այդ անհուն ու հրաշափառ համայնապատկերին վերեւ:

Սթամպուլի դածան ու հոծ կոյտին վրայ բարձրացող աղօթքի պէս նրբալուց մինարէներէն վար կը գահաձիժեր նայուածքս, ու մզկիթներուն ներսիցին կը տեսնայի ծըրբազրած ահարկու ու մտիկան խուժանը որ զահարբի բոցեանդութեամբ ու յաղթականի գոտզութեամբ մը կ'երկրպագէր Մարգարէին: Ամենքն ալ ուրախ կը թուէին, ամենուն զմէջին վրայ կը ճառագայթէր նուիրական պարտականութիւններու կասարման անճառ գոհունակութիւնը, ու շատերու ձեռքերէն արիւնի կաթիլներ կ'իջնային դեռ փոխա՛նին վրայ...:

Անգին, բոլոր այդ իրարու կրթնած, իրարու վրայ հսկած տանիքներուն տակ, ընկճուած ու սղաւոր մարդկութիւն մը կ'երեւնար ինձի, լուռ, խեղզուած, անէացած, շաղապատուովը բոլոր անհնարին տառապանքներուն, չարաչար ու երկարաձգուած հոշեւարքներուն, անձկային ու յուսահատ սպասուիներուն, սարսափած ու լալային որբերուն, խենդեցած մայրական որբուարիներուն:

Եղեանի հոս մը կը բարձրանար, կը տարածուէր քաղաքէն մինչեւ ծովուն պղծուած կապոյտին վրայ որուն յատակը կը մթադնէին շղթայուած, բեռնաւորուած դիակներու կոյտեր...:

Ասգին, Սէլիմիէի զօրանոցը ահեղ ու հսկայական Սպանալիքն էր որ կը ցցուէր դիմացս, իր հազար զոցուած պատուհաններուն ետեւէն մատնելով անողոք ներկայութիւնը լարուած, ձգտուած, անհամբեր Ումին:

Ստուերները կ'իջնային կամաց կամաց, ու հեռաւոր կոռեղատաններուն նոճիները կը սեւնային հետզհետէ, Մահուան մթին խորհրդանշանովը գմբեթելով կարծես անհամար մահմետական մեռելաքարերուն տորածութիւնը:

Ու մէկէն նայուածքս կանց առաւ հեռուն, լուսաւոր բարձունքի մը վրայ. — Երլաբդի քէօշին էր. ու աչքերու չափազանցօրէն, մաշկնօրէն բացուեցան անգիտակից մը զուժով մը:

Երլաբդի քէօշի... Ոճիրի, Պղծութեան, Անէքի ու Սպարանքի տաճար... մահացու Մղձաւանջ հալածուած.

ներու: Երբարդի բէճչիւր... իր մենաւոր, շարաշուք, անկարելի Բնակիչը... ահաբեկի Բոնաւորը... ցաւազար Հրէշը... արիւնի ու աւերի Սուրբանը...

Չէ՛, եսական ու զգլխիչ զգացումը չէր միայն ասիկա՝ Անոր հետապնդող յաճախանքէն, Անոր ճակատապարհական պատուհասէն ազատումին: Արգար ու պոռթկացող զայրոյթն էր ասիկա Հայուն որ առաջին անգամ ըլլալով Պսլիսի վտանգաւոր հողէն անջատուած, Ապահովութեան լուսաւոր պատուհանէն կը նայէր իր Դահիճին, կը տեսնար, զերագոյն սրատեսութեամբ մը, անոր ժահրոտ երեսը, ու անոր վէճ իր շնացած ատելութիւնը կը փոխէր բֆրանքի ունայն ու զովացուցիչ առատութեամբ մը:

Շոգինաւր դանդաղօրէն կը յառաջանար Մարմարայի մէջ, ու Պոլիսը կը ստուերսուէր, կը սեւաւորէր, կը հեռանար, կը բանտարկուէր...

* *

Աչքերս բնազդաբար արեւելք գարձան ու հոգեւին սեւեռման մը մէջ անշարժացան Մատապունիին վրայ: Անիկա ըսաւ ինձի խորտակուած ու անձեռնունելի կեանքի մը բովանդակ արտաութիւնը, ու անցեալին մառախուղէն կոյս ժպիտներ, խնկաբոյր արցունքներ, է՛ն անուշ, է՛ն պաշտելի խօսքերը, է՛ն զիրաբեկ, է՛ն համոզուած խոստումները, է՛ն խորունկ ու է՛ն շուտ մոռցուող նայուածքները յիշեցուց ինձի, ու պատմեց հողիս բոլոր պայծառ սարսուռները, բոլոր արգաւանդ խոկունները, բոլոր ազնիւ թերազրանքները զորոնք տուած էր ինձի իրիկնամուտի զեզերման ժամերու: Ո՛վ իմ հրազններու, իմ խոսիչներու, իմ պատանեկան ըղձանքներու նուիրական հրուանդանը...

Չգացի որ ա՛լ լմնցած էր. բաժանումն էր, ասիկա, վերագարձին սրտապնդող յոյսէն եղկելիօրէն այրի. ու ինչնր կը ձգէի ես հոն...

Ատեն մը գիւ մնացի հող, անշարժ, աչքերուս մէջ հողիս շուարած: Խուլ հեծկլտանք մը կ'ուռննար կուրծքիս տակ, ու երբ ընթրիքի զանգակը եկաւ սթափել զիս՝ տեսայ որ բացարձակ մթութիւնով պաշարուէր էի:

Ու նաւը կը սահէր հիմա աւելի արագ՝ քորշ, անոտահաման կապոյտին վրայ:

* *

Տաժանելի ճամբորդութիւն մը եղաւ աս: Փոթորիկը սկսաւ Տարտանելէն անդին, ու վայրագ յամառութեամբ մը տեւեց շարունակ: Ու ես՝ հիւանդ՝ հակառակ աշխատելու խոստումիս չկրցայ ելլել անկողնէս:

Անձկութեան ու պակուցումի ահարկու օրեր անցուցի, ու զիշերներ մանաւանդ, երկար, անլիերջ մահացու զիշերներ ուր աչքերուս մէջ մօրս պատկերը ու լայնաբաց անդունդներ զոցած՝ մահուան սպասեցի: Ու վհատութեան, վատութեան գերագոյն վայրկեաններու մէջ՝ մտածեցի թէ աւելի աղէկ էր Պոլիս կեցած ըլլալ ու բանտի մը անկիւնը փտախլ ազատումին ապրեցնող յոյսովը քան

այդ դիւային զահանգական սպառնալիքը ապրիլ գիշեր մը միայն:

Չեմ՝ գիտեր ո՛րչափ տեւեց ասիկա: Բայց Ազրիտակնէն անդին ծովը խաղաղեցաւ ու ես կրցայ գոնէ քանի մը օր նաւուն մէջ ծառայած ըլլալու գոհացումը ունենալ:

* * *

Գիշեր մը երբ գես հազիւ սկսած էի մրափել՝ խցիկիս դուր գարնուեցաւ արագ ու բուռն հարուածներով: Ցառքեցի անկողինէս ու բացի դուր: Նաւաստի մըն էր սրանապարանքով՝

— Ե՛րա, հագուեցէ՛ք ու վեր եկէ՛ք, ըսաւ, նաւապետը ձեզի կը սպասէ կոր, շուտ ըրէ՛ք...

Քիչ մը այլալաւ մայս յանկարծական կոչէն, անծանօթ ու հաւանական երկիւղի մը կասկածով՝ հակիրճօրէն ծածկուեցայ ու սանդուխէն վեր շտապեցի:

Նաւապետը զիշերազգեստով ու բոպիկ, զրեթէ մերկ, հոն կեցած էր. զիս տեսնելուն պէս յառաջացաւ ու նեղսիրտ շեշտով մը՝

— Ֆրանսերէն գիտէ՛ք, հարցուց:

— Այո՛, պարոն...

— Ուրեմն հետս վեր եկէ՛ք:

Հապշտապ վեր ելանք: Այդ միջոցին նշմարեցի թէ շոգինաւր զգալապէս դանդաղեցուցած էր իր գնացքը:

Երբ կամուրջին վրայ հասանք, Նաւապետը՝

— Տեսէ՛ք ի՛նչ կ'ուզեն սա մարդիկը, ըսաւ, միշտ նոյն նեղսիրտ շեշտովը ու ձեռքը տենդոտ շարժումով մը դէպի նաւուն ծիրը երկարելով:

Շուարած, չհասկնալով թէ ի՛նչ ըսել կ'ուզէր, խեղքին ծայրը փութացի: Նաւաստի մը կեցած էր հոն որուն ձեռքէն ձգտուած պարան մը կ'երկննար դէպի վար: Ծոնցայ քիչ մը անոր ուղղութեանը մէջ, ու զարմացումով նշմարեցի, տասնեակ մը մէթը հետաւորութեամբ, փոքրիկ նաւակ մը, որ կը քաշուէր կուգար նաւուն ետեւէն, ծիրին ձերմակութեանը վրայ:

Պզտիկ, շատ սղտակ նաւակ մըն էր ատ որուն մէջ զուավի համազգեստով երկու երիտասարդ, իրարու ուսէ բռնած, ոտքի կեցած էին ու օգնութեան անձկագին սպասումի կերպարանքով մը մեզի կը նայէին: Ծերուկ նաւակ մը, զեկը բռնած, կը ծխէր անոնց ետին, վարժուած, համակերպած մարդու հանդարտութեամբ մը:

Միջերկրականի մէջտեղները պէտք էինք ըլլալ: Ի՛նչպէս այդ մարդիկը կրցեր էին, այդ փետուրի պէս ճղճիմ նաւակին մէջ, մինչեւ այս այլամերձ ու սպառնալի բացքը յանդգնիլ: Բայց զարմանալու տտեն չէր: Նաւապետը քովս կ'երերտկար, իր սպասումին մէջ անհամբեր ու հրամայական:

— Ի՛նչ կ'ուզէք, պարոններ, հարցուցի:

Ու երկուքը մէկ սկսան հեւ ի հեւ ու ցամքած ձայնով մը պատասխանել:

— Մենք փախտականներ ենք Ալմէրիի ֆրանսական բանակէն: Օղին զեղեցկութենէն օգտուելով այս սպանիա-

ցի ձկնորսին նաւակը նետուեցանք ու ծովուն վրայ փրկարար հանգիւումի մը յոյսովը յառաջացանք: Երկու օրէ ի վեր ցամաքը ձգած ենք ու դեռ նաւու մը չէինք հանգիւած: Մեր պաշարը հատած է ու ծարաւէն կը մեռնինք կոր, ու ամէն վայրկեան մտաւրուս փութորիկին վրտանողը մեր կեանքին կը սպանայ: Հիմա կը պազատինք յանուն Աստուծոյ որ Պարոն Նաւապետը հաճի մեզի իր նաւը առնել ու ո եւ է օտար եզերք մը ձգել: Ճամբու ծախքը կրկին անգամ կը վճարենք: Նորէն կը պազատինք Պարոն Նաւապետին որ զթայ մեր կեանքերուն ու այս խեղճ ձկնորսին ալ զոր բռնի ստիպեցինք մեզի ու իր նաւակին ընկերանալ...

Ալ մտիկ չըրի. անմիջապէս ետիս դարձայ. Նաւապետը բացատրութեանս կը սպասէր կոր խոժոռագէմ: Կրցածիս չափ ազգու ու յուզիչ բառերով ըսի իրեն այդ սղբալի գինուորներուն ահռելի կացութիւնը: Երբ ես Նաւապետին կը խօսէի, անոնք կսկծալի ձայնով մը անդադար կը կրկնէին անդիէն.

— Յանուն Աստուծոյ, յանուն մարդկութեան...

Բայց հազիւ թէ արտասանած էի փախտական բառը, Նաւապետը բարկութեան պատոււով մը ու շոր, վայրագ «կ'օգտէ» սով մը ընդմիջեց զիս ու նաւատորին գառնայով հրամայեց թող աւալ պարանը.

— Լէք կօ տէր քօք...

Ան առեն ըստմնելի, աղիւտորով բան մը պատահեցաւ: Երկու փախտական գինուորները, սրտածմլիկ, մահա սարսուտ ձայներով, որոնք հանգիւններու պէս խուպոտ կը հնչէին, սկսան պոտալ.

— Պ՛ւտ մը ջուր, օ՛հ, պ՛ւտ մը ջուր... գո՛նէ պ՛ւտ մը ջուր...

Խեղցեցած էի: Ասիկա չէր կրնար ըլլալ: Նաւապետը երթալու վրայ էր. վազեցի թեւէն բռնեցի ու աղաչաւոր՝

— Պարոն, Պարոն, ջուր կ'ուզեն կոր, բիշ մը ջուր ըսէք գո՛նէ որ տան իրենց, մե՛ղք են, Պարոն...

Բայց Նաւապետը, անտարբեր, թեւը ձեռքէս բաշելով մերժողաբար մտաւայ՝

— Նե՛վըր մե՛յնտ:

Ու երկրորդ նաւապետին դառնալով հրամայեց արագիւ գնացքը.

— Պոչ սրի՛մ, մարք Զօնարէ...

Յետոյ կըստ գնաց իր ընդհատուած քունը շարունակելու...:

Երբ ետիս դարձայ, նաւակը արդէն կորսուած, անհետացած էր տեսութեանս սահմանէն: Բայց դեռ ականջներուս մէջ կը կոտտար եղիկելի փախտականներուն գալարաւանջ աղաղակը.

— Պ՛ւտ մը ջուր, պ՛ւտ մը ջուր...

Օ՛, իրերուն հրէշային նենգութիւնը. այդ մարդիկը որ ջուրի անսահմանութեան մը վրայ կը ծփային՝ կաթիլ մը ջուրի ծարաւէն պիտի փճանային, եթէ նորէն ջուրը, ալէկոծ ու գայլացած Զուրը չխեղդէր զիրենք պահ մը վերջը...:

* * *

Ընկճուած, խելայեղ, նստարանի մը վրայ ինկայ մնացի այդ տեղ:

Աշնանավերջի պայծառ գիշեր մըն էր: Միջերկրականը, աստեղագարդ երկնքի մը զմայլանքին տակ, կապոյտ խաղաղութեան մը մէջ կը յաւերժանար անսահմանօրէն՝

«Քունը ա՛լ փախած էր ուղեղէս: Միկառէթ մը վառեցի ու ջանացի մտտալ: Բայց միակ ու տիրական մտածում մը տարամերժօրէն կը ծանրանար, կը խարսխուէր էութեանս մէջ:

Չէ՛, ասիկա երազ մը չէր: Ու իմ միտքս՝ բոլոր հըսկայ անիրաւութիւններուն, բոլոր զրուելի բռնութիւններուն, բոլոր աններելի չարագործութիւններուն կարելիութեանը վարժուած, ընտելացած, կը դժկամակէր ըմբռնել, կը մերժէր յղանալ այս անտարբերութեան, եսականութեան ու անդժութեան դժնդակ երեւոյթը... Անզլիացիի մը, Երոպացիի մը քով:

Օ՛հ, իմ մանկական ողբալի տրամաբանութիւնս:

Ասիկա կեանքիս մեծ գիշերը եղաւ, ուր առաջին անգամ, այդ եղբրական պարագաներուն մէջ, ճանչցայ, հասկցայ մարդկային վիթխարի վատութիւնը, ու նայուածքս խելայեղօրէն զրկեց բովանդակ պարագայն ու ունայնը քաղաքակրթութեան մեծամիտք ու հոյակապ յաւանութիւններուն:

Ո՛ր կ'երթայի կոր...

— «Երոպայ», «Ազատ երկիր», «Քաղաքակրթութեան մարտիկներու մէջ»...

Խեղճ, միամիտ տխմա՛ր: Մարդը ամէն տեղ նոյնն էր, ու Տաճիկը ո՛չ նուազ ազնիւ, ո՛չ նուազ վայրագ, ո՛չ նուազ մարդկային քան Երոպացին կամ Եանքին:

Ասիկա լայն ու բարեբար հորիզոններ բացաւ մտքիս մէջ, իմ կիրքերով ու կարճ, սխալ գաղափարներով խափանուած՝ հալածուածի, տարագիրի, Հայու ուղեղիս մէջ:

— Պ՛ւտ մը ջուր...

Բայց այդ խեղճ փախտականներն ալ իմ բաղադակեց եղբայրներս էին, ինչ ալ դժբաղդ պուցէ: Անոնք ալ տարբեր ու նոյնքան ճնշող բռնութեան մը զէմ ըմբոստացած, թօթուած կին իրենց շղթաները, փախած անանական պետերու մեղմող կամքէն, ու Մահուան քովէն անցնելու, անոր սեւ, անյագ զրկին մէջ կորսուելու վտանգով կամովին տարազրուել յանձն առած էին իմինէս այլապէս երջանիկ, այլապէս մայրական հայրենիքի մը կենսատու շերտութիւնէն:

— Պ՛ւտ մը ջուր...

Բայց ասիկա մեր խեղդուած Զայնն էր. խուլ, երկայն, պաղատադին աղաղակը Հայ Տառապանքին զոր անտարբեր լսեցին բոլոր հզօր պետերը «քաղաքակրթութեան» նաւերուն: Արիւնի ծով մը տուինք անոնց, ու փոխարէն՝ ծունկի եկած՝ «պուտ մը ջուր» աղաղակեցինք, ու անոնք ամենքը կանակ դարձուցին մեզի...:

— Պ՛ւտ մը ջուր...

Ա՛լ այս բառերը զլուխ չձգեցին ծովուն վրայ, ճակատագրական յանկերգի մը պէս որ կը կատչի, կը յամտի, կը հալածէ...:

ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵԻՆ

ՀՐՈՍԱԿԻ ՄԸ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՆ

ԺԱ

Վերսայրած Եկեղեցաց գաւառը. — Չմբան կեկեցադա-
վարաքիւն. — Գարեան մեկեւաւ. — Հայ հիւրընկալու-
քիւնը. — Փորսքիկ:

Պէլլերեան, Պատուելին ու Եկէկէն Պաղտասար Ար-
մուտանէն վերադարձան Եկեղեցաց գաւառը, ձմեռը այն-
տեղ անցընելու որոշուով: Արդէն հոն կեղրոնավայր մը
հաւաքուած էին զանազան կողմերէ եկած քսանըհինգի
չափ երիտասարդ, որոնցմէ քսանը զէնք գործածելու վարժ
եւ կարող:

Չմեռը իրենց ապահովութիւնն էր: Չիւնապատ լեռ-
նորը եթէ անշարժութեան կը դատապարտէին հրոսակնե-
րը, նաեւ անհնարին կ'ընէին թիւրք զինուորին այցելու-
թիւնը: Հայոց ապաստանարանը երեք կողմէն շր-
ջապատուած էր լեռներով որոնցմէ անցնիլ անկարելի
էր: Մէկ ճամբայ մը միայն բաց կար, ան ալ երեք ժամ-
ուան հեռաւորութեամբ: Ու հոնկէ եկողը պէտք էր ցածէն
վեր բարձրանար, ուստի կրնար տեսնուիլ, և հրոսակները
կարող էին ինքնապաշտպանութեան կամ յարձակումի
պատրաստուիլ: Ամբակառոյց էր իրենց զրուած զիրքը,
կրնային յաջողութեամբ զիմաղրել քանի մը վաշտի: Ըն-
կերները կարգաւ ամէն օր բարձրագիր քարի մը վրայէն
հսկելու պարտականութիւն ունէին:

Սակայն էն շրջահայեաց եւ արթուն հսկողները Պու-
լիկն ու Ասլանն էին, ոչխարներուն շուները: Հիմա հօ-
տերը փարախը քաշուած, իրենց անգործ պահապաններն
ալ հայ հրոսակին սպասարկողը կը դառնային, շատ դի-
ւրացնելով հսկողներուն գործը: Իրենց հաջոցը ազգարար
փողն էր: Պուլիկն ու Ասլանը շատ հեռուէն հոտ կ'առնէին,
ու այցելուին սեփն համեմատ կը հաշէին: Տարբեր հա-
ջոց՝ եթէ անասուն մըն էր եկողը. տարբեր հաջոց՝ եթէ
մարդ մը. ու եթէ ծանօթ մըն էր ան, շուները երկու ժամ-
ուան տեղ ընդառաջ կը վազէին: Իսկ երբ տեղերնին կե-
ցած կը հաշէին, հսկողները կ'իմանային թէ եկողը օտա-
րական մըն է, եւ ըստ այնմ՝ ցորեկը հեռագիտակներն
կ'ուզէին դէպի ճամբան, եւ գիշերը՝ կը մնային արթուն:

Հոգեզուարճ հրապոյրներով լեցուն կեանք մը կը վա-
րէին հրոսակները այդ տեղ. քանի մը մանրամասնութիւն
մեր ընթերցողներուն պահ մը մոռցնել պիտի տան տըխ-
րութեան զգացումները որոնք իրենց սրտերը շատ կսկծե-
ցուցին այս Յիշատակարանին մէջ:

Ամենքը առտուն կանուխ արթննալով թէյ խմելէ յե-
տոյ կ'երթային եկեղեցի. Պէլլերեան ու Պատուելին տա-
ճարին մէջ կը դառնային կ'ըլլային հին Հայք, մէկը՝ ա-
ջակողմեան, միւրը՝ ձախակողմեան դասը կայնած փո-
խասաց տիրացուի պաշտօն կատարելով: Մխիթարուած,
ու քաջալերուած, մամապաղտեան հաքը կը սկսէին իրենց

աշխատութիւններուն: Ամենքը իրենց գործը ունէին. ոմանք
զէնքերը նորոգելու եւ թեթեւցնելու կ'աշխատէին. շատ
փամփոռներ կային, պարպած ու ժանգոտած, զորոնք կը
մաքրէին լեցնէին. ուրիշներ կապար կը թափէին. զերձակ
մը ամբան զգեստները կը պատրաստէր. հսկողը՝ իր պաշտօ-
նը կը կատարէր. ուզլիաւոր վարիչները կը զբաղէին ամառը
գործադրուելիք ծրագրով: Յորեկը որոշեալ ատենը ճաշել
յետոյ, մարմնամարզ, խաղ, ընթերցում: Իրիկուան նո-
րէն եկեղեցի կ'իջնէին. վերադարձին ընթերիք ընելէ յե-
տոյ, ա'լ մինչեւ ննջելու պահը կը զբօսնուին: Իրենցմէ
հինգը նուագածու էին, ջութակներն ու պսուղարներն մէկ-
տեղ էր. կը շարուէին կարգաւ ու կը սկսէին զարնել ազ-
գային երգեր, խաղեր. միւսները նուագարանին կ'ընկե-
րանային երգելով, խաղալով:

Այսպէս հրճուանքով անցուցին ձմեռը. զարնան զը-
ններ ա'լ կը բացուէին, ձիւները կամաց կամաց կը հալէին.
գործելու ժամը կը մօտենար:

Գարնան հետ ծանր լուրեր ալ կը հասնէին: Չորս ե-
րիտասարդ որոնք Արմուտան կարեւոր դեր մը կատարած
էին յեղափոխական գործին մէջ, ու յետոյ Պուլիս գացած,
հոն ձերբակալուելով խրկուած էին Գուրիչայի բանտը,
հոնկէ Երիզա փոխադրուելու համար: Բանտարկեալները
կը թուէր թէ փախչելու զիւրութիւններ պիտի կրնային ու-
նենալ. Պէլլերեանին լուր եկաւ խումբով երթալ Արմու-
տանի կողմերը եւ հոն կարգադրութիւններ տեսնել, փա-
խուտը երազելով բանտարկեալները խումբին մէջ առնե-
լու համար:

Այդ միջոցին ուրիշ ծանր դէպք մըն ալ պատահած
էր: Աշունը Քարահիտար մնացող ընկեր մը քանի մը հա-
մախոհներով կրցած էր քաղքէն գուրս կողոպուտ մը ընել.
800 ոսկիի գումար մը բանութեամբ կորցած էր վաճա-
ռականէ մը ի նպաստ գործին: Քաղքը վերադարձին հա-
մախոհները ձանձրուելով ձերբակալուած էին. իսկ ընկերը
ինքն ալ իր պահուրտած տանը մէջ տանտիրոջը մատ-
նութեամբ բռնուած եւ բանտակուած էր: Այս ընկերն
ալ մասնաւորապէս տեղեակ էր Եկեղեցաց գաւառի գաղտ-
նիքներուն. բանտին մէջ շատ շարժարանք տուած էին ի-
րեն, սակայն բան մը յայտնած չըլլալուն լուրը կեղրո-
նաւայրը հասաւ: Միայն կողոպտած զրամը ձեռք ան-
ցուեր ու տիրոջը տրուեր էր:

Այս բոլոր տեղեկութիւններուն վրայ հարկ եղաւ
ճամբայ ելլել, գործելու վայրերը երթալու համար: Բայց
տակաւին լեռները ձիւնապատ էին, ու ճամբաները զոց.
շատ զժուար էր խմբովին յառաջանալ. ուստի միայն երեք
Արմուտանցիները ուզեցին առաջ երթալ, ու միւսները
վերադառնալ: Համաձայնեցան որ մայիս 12ին ամենքն
ալ գտնուին ձմրան կեղրոնավայրը, եւ հոն ընդհանուր
ժողով գումարելով պատրաստեն նոյն տարուան գործու-
նէութեան ծրագիրը, եւ գործադրեն զայն:

* * *

Երեքն էին նորէն որ հետեւին առաջնորդ մը, կը բաշխէին ճիշդ ժամանակին կարեւոր գեղ մը համեմուտ: Կ'անցնէին թիւրք գեղերէ, ուր լոյսերը կը վառէին, վասն զի բամազան էր. ուստի ստիպուած էին շատ բացերէն բաշխել, չնշմարտելու համար: Տեղ տեղ մինչեւ ծուռկերնին կը խրուէին ցեղեր, կ'իյնային կ'ելլէին, ու այսպէս հասան իրենց ժամադրաւայրը: Տունը ուր պիտի իջնէին առաջնորդին խրիցեցին տեղ պատրաստելու համար. մարդը բաւական ուշ վերադարձաւ գոյժ բերելով թէ տանտէրը չընդունիր զիրենց: Ետեւրած մնացին, քիչ պիտի ընէին: Այդ կողմերը ուրիշ մէկն ալ կը ճանչնային, բայց չգիտէին թէ տունը ո՞ր կողմն է: Առաջնորդը ըսաւ թէ ինք ազգական մը ունի, բայց տունը գետէն անդին է. հոն կը տանի զիրենց, պայմանաւ որ Հայ բլաւին չիմացնեն: Որոշեցին որ իբր խաչախ Լազ ներկայանան, հայերէն բնաւ չխօսին, եւ ծխախոտի բեռները պիտի գան՝ ըսելով ցորեկը մնան ու գուրս չելեն:

Գացին այդ գեղը. առաջնորդը գնաց իր ազգական երիտասարդին լոյր տուաւ: Ասիկա իմանալով որ խաչախ Լազերը բարեհաճած էին իր տունը գալ հիւր ըլլալ, ընդգոծ վազեց ու «պոյուրուն» ըսելով տուն առաջնորդեց: Ուրախ էր որ անոնց բարեկամութիւնը պիտի շահէր, եւ քանի մը գուրգուշ ալ պիտի օգտուէր: Հիւրընկալը կին մը ունէր. երկուքն ալ փութկոտութեամբ հիւրերուն կը ծառայէին, որոնք Օսման, Եուսուֆ, Ալի անունները առած էին: Առաջնորդը ճաշը ընելով մեկնեցաւ. ու կեղծ Լազերը պատուիրեցին տանտէրերուն ոչ սքի ըսել իրենց ներկայութեանը մասին: Ու ա՛լ վստահ, հանդուստացան բազմոցներու վրայ, մարթինները ազդերնուն մէջ, զէնքերնին վրանին, ու կը մտափէին այսպէս ծանրաբեռն: Միջոց մը Լազերէն մէկը նշմարեց որ մօտակայ պատուհանին առջեւ երկու պուսի կ'երեւնային. մէկը՝ տանախրոջն էր, միւսը՝ անծանօթի մը որ անոր կ'ըսէր. «Տիւմար աղայ, ասոնք Լազերու կը նմանին. քիչալս խաբուեցար. ասոնք Հայեր են, Հայեր»: Ու կ'ուզէր ներս մտնել. իսկ տանտէրը կ'ըսէր. «Անոնցմէ հրաման չունիմ, կեցիր երթամ հարցնեմ»: Բայց անիկա մտիկ չընելով ներս մտաւ. միջահասակ, լեցունկէկ մարդ մըն էր. վստահ էր հիւրերուն Հայ բլաւուն, հայերէն բարեւոյց, եւ մօտեցաւ ձեռք սղմելու, «Բարով ու հազար բարով եկիր էք» ըսելով: Լազերը մէյ մը կարմրեցան, թէեւ կը փորձէին գեթ թիւրքերէն պատասխանելու, բայց նորեկը խաբուող մարդ չէր. սուտ չէր կլլեր: Ա՛լ գազտնիքը պարզուեցաւ. եւ լայնիկէկ մարդը ցատքեց հիւրերուն երեսն ալ պաղաւ ըսելով. «Ողջ ըլլաք որ սարսափ ազդեցիք այս կողմերն իսկ. ամէն տեղ ձեր վրայ կը խօսին, եւ կառավարութիւնը ամէն ճիգ թափեց, ու չկրցաւ բռնել ձեզի: Հայերուն մէջ ալ քաջեր կը գտնուին՝ սկսան ըսել մեր վրացի թիւրքերն ու Քիւրտերը. բայց ա՛խ, երանի թէ միշտ ազատ մնայիք, ու մենք ալ ձեզմով միտիւթարուէինք. այս քաշած բոլոր շարշարանքներնուս հետ կրկին միտիւթարուէին մըն էք դուք մեզի համար:» Ա՛լ ամէն բան պարզուած էր. օգի

բերին հիւրերուն. միւս օրն ալ այդ բարի մարդը մինչեւ իրիկուն չբաժնուեցաւ հրոսակներէն. երկու անգամ ճաշ ընել տուաւ, եւ կ'ուզէր որ քանի մը օր հիւր մնան. բայց անոնք շուտով մեկնելու հարկին մէջ գտնուելնին իմացուցին: Հարցուց թէ զրամի պէտք ունէին. ո՛չ, պատասխանեցին:

Բաժանուածի բոպէն սրտաշարժ եղաւ: Մարդուկը չը կրցաւ ինքզինքը զսպել, եւ սկսաւ լալ. «Վախ ձագուկներս, զիշիւր ատեն քիչալս պիտի ճամբորդէք. մօտակայ լեռը գեթ ձիւնով լի է, ու հալած տեղերը ցեխ: Զգուշացէք որ չբռնուիք. ձեր ամէնէն մեծ քաջութիւնը հոն է:»

Ու դառնալով տան տիրոջը հրամայեց որ աղէկ առաջնորդէ, վարձք չառնէ: Այս երիտասարդն ալ սկսաւ բարի նախանձ ունենալ հրոսակներուն որոնք կ'արժանանային իրենց ընտանիքին մեծին համարումը զրաւելու:

Այդ տեղէն մեկնելով քաղցին, քաղցին ու հասան գեղ մը, ուր առաջուց լուր խրուած ըլլալով, իրենց կը սպասուէր: Տանտէրը ան ալ միւսին պէս ազգասէր մարդ մըն էր: Հոս ստիպան գազտնապահութեան պէտք չզգացուեցաւ. եւ տանտէրը զեղին երիտասարդները քաջալերելու համար տոանձին տոանձին կը բերէր կը ներկայացնէր զանոնք հիւրերուն, սրպէս զի օրինակ ասոնն ու անոնց նման քաջ ըլլան: Աս բարի մարդն ալ կ'ուզէր հրոսակները հրկար ատեն պահել, եւ քաղցէն ալ յորդառաւ անձրեւ սկսաւ տեղալ. շաբաթ մը ամբողջ օդը անձրեւոտ էր, եւ անհնարին եղաւ ճամբանին շարունակել. Աւազ շաբաթ էր, ու Զատիկն ալ հոն ըրին: Ամէն օր վեց եօթը երիտասարդ կ'այցելէին եւ իրենց նմանելու փափաք կը յայտնէին: Օր մը օդը բաց գնաց, եւ որոշեցին անյապաղ այդ գիշեր ճամբորդել: Այլ ես առաջնորդի պէտք չունէին. երեք ժամ անդին իրենց դաւառին պատկանող հօգը պիտի մտնէին, ու ճամբաները աղէկ զիտէին: Հիւրընկալը եւ եօթը զինուած երիտասարդ ընկերացան հրոսակներուն մինչեւ ժամուան մը տեղ: Հոն իրարմէ բաժնուեցան, եւ տանտէրը իր ունեցած հեռագիտակը նուիրեց հրոսակներուն՝ «Աս ձեզի կը վայլէ» ըսելով:

Հրոսակները կը յառաջանային օձապտոյտ ճամբաներով. ամպերը սակայն կը զիգուէին երկինքը, ծածկելով լուսատու քանի մը ատոյղերը: Ու ահա սրտտում, շանթ, խաւար, Հիւսա գաշտի մը մէջ էին. ճանապարհը արդէն շինուած չըլլալով կորուսած էին: Մութ էր, աչքերնին չէր զօրեր. շուարեցան մնացին. ո՞ր երթան, ո՞ր պիմեն: Անձրեւը յորդահոս կը տեղար, բոլոր հաշուատնին կը թըջէր: Լեռ մը, քար մը, խոռոչ մը, ծառ մը կը փնտռէին ու չէին գտնուիր: Ա՛լ բազդին անձնատուր եղան եւ մութին մէջ կ'երթային. միայն կայծակներու զարկին ուշադրութիւն ընելով, անոր լոյսէն կը զիտէին շորս կողմերնին. եւ ահա բոլոր մը նշմարեցին ու ան կողմը յառաջացան. եւ ահա կայծակ մըն ալ ու քարեր նշմարեցին: Գացին կոնակներն անոր տուած անձրեւին հակառակ կողմը նըստան: Եէկէն Պաղտատար որ ծխելու սաստիկ տենչ ունէր, ներսէ ներս շատ մը շորերու փաթեթած չախմութը հանեց.

Թացութիւն առած ըլլալուն շատ զփութարութեամբ վառեց. լուցկի ալ կար, բայց բոլորը թրջած էր. նստան քառորդի մը չափ. անձրեւը մեղմացաւ. սիկանները ձեռքերնուն մէջ պինդ սեղմած էին որ չմարի, վասն զի ա՛լ կրակ ճարիլը զփութար էր: Ծոռելով գետին սիկառի լոյսով ճանապարհ կը փնտռէին: Դեղերեցան առջին անգին, եւ ահա գետակի մը ձայնը հասաւ ականջնուն, հետեւեցան ձայնին եւ մինչեւ գետակը հասան: Ա՛լ ամպերը քիչ քիչ բացուելու հետ էին, եւ աստղերը կ'օգնէին. մօտեցան գետակին, ուշադիր դիտեցին. իրենցը չէր: Բլուրնները, լեռները, ձորերը, ամենքն ալ ուրիշ էին: Անձրեւէն գոյացած հեղեղն էր որ գետակի մը վերածուեր եւ խոշոր ու մանր քարերը առած իրար զարնելով կը տանէր. անցնիլ կարելի չէր: Ստիպեալ ձորէն վեր բաւական գացին յուսահատ վիճակի մէջ. նշմարեցին փլատակ շէնք մը. քիչ մը տեղ գետ չէր քակուած. քանի մը դարձիկներ կանգուն մնացած էին. մտան տակը, զէնքերնին վար առին, փլած տեղէն քանի մը մարդակ քաշեցին, եւ կրակ մը վառելով զգիտանին շորցնելու սկսան:

Նպատակնին այն գիշերը իրենց որոշած գեղը հասնիլ էր, բայց ալ ուշ էր. արշալոյսին մէկ ժամ հագիւ մնալուն զուրս ելան փրատակներէն, ու տեսան որ հետուէն կը փայլէր գետակը որ իրենց ճամբան պիտի շտկէր. դարձան հոն, եւ մեծ զփութարութեամբ մտան իրենց զուտոնին պատկանող հողը. կարող եղան արեգի տեղ մը բարձրանալ, բաց գետնի վրայ, եւ ապաստանեցան փոքր կաղնիի մը մաքառներուն ետին: Առտուն արեւը ծայրեցաւ. շորցաւ վրանին ու իրենք ալ տաքցան. մտցան գիշերուան նեղութիւններնին, ու ապահով տեղ մը ապաստանեցան սպասելով գիշերուան: Մութին նորէն ճամբայ ինկան, եւ կէս գիշերէն քիչ վերջը հասան որոշուած գեղը եւ իջեանեցան իրենց ծանօթ ու բարեկամ տուն մը:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

Ժ Ա Մ Ա Ն Յ

ԹԻԻՐԻՄԱՑՈՒԹԻԻՆ ՄԸ

Բարեկամ մը մտերմարար ինծի հագորակեց, լուսաբանութիւն մը խնդրելով, առեղծուածի նմանող նամակի մը պատճէնը որ իրեն խրկուած էր նշանակութիւնը մեկնելու համար: Առաջ ես ալ չկրցի բան մը հասկնալ, բայց յետոյ...: Սակայն նախ ամբողջապէս արատազրկու:

«Եազօր ջա՛ն,

«Այսօր իսկ հասայ Պոլիս. շտապում եմ քեզ գրել իմ յեղափոխութեան մտաւոր առաջնորդի մի քանի ժամ

վայ գործունէութիւնը, որ տեսնէք թէ ի՛նչ բաներ կարող եմ անել, եւ գետ ինչեր էլ պիտի անեմ:

«Առաւօտեան ժամը Տիւն հէնց որ պարախօզը (1) կէլին (2) կպչեց, մեր տղերքը ներս մտան: Այդ բոպէին ես զբաղուել էի իմ բոմբաների (3) մասին մտածելով: Եազօր ջա՛ն, մուտուածանների միւսըւտները որ ծովից ես տեսայ, միտք արեցի բողոքն էլ քարուքանդ անել. բայց ափսոս որ զգուշաւորութեան համար իմ բոմբաները ժրնէլում էի թողել: Ինձ տեսնելիս տղերքը մտածում էին թէ իրանց մտաւոր առաջնորդը ի հարկէ ես պէտք է լինեմ. բայց չէին համարձակվում ինձ մօտ գալ: Ես ծիծաղելով նրանց հարցրի. «Ո՞ւմ էք փնտռում, պարոններ»: «Ժրնէլից մի ընկերոջ» պատասխանեցին: «Ես եմ» առաջի: Իմ ձեռք մեկնեցի նրանց: Ինձ անուանում էին Պ. Առփախիւր: Ես ոչինչ դիտարութիւն չարի: Անկասկած դուք շփոթուել էք. իմ նամակը Ալէկսանդրիա պէտք է ուղարկած լինէք, եւ Առփախիւրի նամակը այս տեղ: Խօս՛ պարունակութիւնը նոյնն է, բայց անունների տարբերութիւն կայ. ինչպիսի՞նք եմ այս սխալը շուտ ուղղէք:

«Հէնց առաջին բոպէին մեր տղերքը իմ վերայ լաւ ապաստութիւն թողեցին: Իսկ եւ իսկ այս հոսհոսները գիբլօմասներ են ծնվել: Երեւակայի՛ր, իրանց պլուսները ծածկել են եւրօպացու բանւորների կասկէթներով (4). Թուրք պոլիցիան (5) որ տեղաց պէտք է իմանայ թէ նրանք Հայեր կը լինեն: Այդ մի մեծ ուստայութիւն է որ արել են. այդ հոսհոսներից էլ պէս բան իսկի չէի սպասում: Այժմ յոյս ունեմ, Հէնց այդ նշանից, թէ ես նրանց լաւ յեղափոխականներ կը շինեմ: Բայց ինչ որ էլ լինի հոսհոսներ են. բղաւում էին, խօսում էին հայերէն: «Պարոններ՛ր, մի փոքր զգոյշ կացէք» հրամայեցի: Միմեանց նայեցան:

«Մաքսատան գործերը շուտով վերջացրին. մի ֆայթօն վեր առանք հիւրանոց գնալու: Իզօռչիլը (6) մի թուրք էր. Եազօր ջա՛ն, միտք արեցի տեղն ու տեղը ըստ պաննել նրան. բայց մտածեցի որ մի փոքր էլ զգոյշ պէտք է լինել, է՛:

«Մեկ տարան թուրքերի մի կեղտոտ բուշայ (7), մի ինչ որ Սթամբուլ հիւրանոց (8) անուանում էին: Ես ցանկանում էի մի փառաւոր հիւրանոց իջնել, իմ մտաւոր առաջնորդի դիրքի վայելուչ, օրինակ Լոնգոն հիւրանոց, որ 96ին եղել է Առփախիւր, երբ այս տեղ եկել է որ այդ կեղտոտ հայ բուրժուաններին կոտորել տայ սօփալիների ձեռք: Բայց մտածեցի թէ մեր տղերքը խոհեմութիւն են արել ինձ այս հիւրանոցը բերել. թուրք պոլիցիան չէ կարող մաքիցը անցկացնել թէ հայ յեղափոխականների մը տաւոր առաջնորդը կարող է թուրքերի ուլիցայում (9) բնակվել: Իսկ ե իսկ գիբլօմաս են ծնվել այս հոսհոսները:

«Շօրերս փոխելուց յետոյ հրամայեցի որ ինձ տանեն

(1) Շոգեհաւ: (2) Քարափ: (3) Ռուսթ: (4) Գտակ: (5) Ոստիկանութիւն: (6) Կառապան: (7) Նեղուժեղ փողոց: (8) Պանդոկ: (9) Փողոց:

մի լաւ նախաճաշ անել: Ոտով կամեցայ դնալ: Մի քիչ յետոյ մտանք մի ընդարձակ պլոշտա (1): Նմանը իսկի մեր Ժրնէլիումն էլ չի կայ: Պլոշտաում բարձրանում է մի աղեղ արձան. մի ինչ որ հաստափոր թուրք շալվարով նստել է ձիւ վերայ: Հարցրի թէ « ո՞ւմն է այս արձանը »: « Մահձաղ Ալուն (2) է » ասացին: Իրձաղեցի: Ի՞նչ ասած. լաւ տղերք են, բայց պատմութիւն ո՞ր տեղաց պէտք է իմանան: Խեղճերը մեզ նման համալսարաններից դուրս չեն եկել: Ես նրանց բացատրեցի թէ այդ արձանը Մահձաղ Ֆաթուն է, Սթամբուլը նա է առել. չպէտք է Պուլիսը շփոթել Եգիպտոսի հետ: Նրանք միմեանց նայեցան: Ես այդ բոպէին իմ դրպանումը մի բամբայ էի փնտռում. միտք արեցի այդ արձանը տեղն ու տեղը ջարդ ու փշուր անել, որ ուղթանին ահաբեկեմ: Բայց մտածեցի որ մի փոքր էլ զգոյշ պէտք է լինել, է՛:

« Մահձաղ Ֆաթուն արձանի դէմն ու դէմը գեղեցիկ կափէ (3) կար. դրուստն ասած մեր կափէ—Լիրիկիցն էլ լաւ: Մի խորթ անուն էին տալիս, ինչ իմանամ, ինչ զահրումար անուն են ասում. կաղալիլալ (4) թէ ինչ բան: Այդ կափէում մի լաւ նախաճաշ արեցի. էլ թէյ ես ասում, էլ պիրոշնի (5) ես ասում, էլ ինչ ես ասում: Տղերքը վճարեցին այդ ամէնը: Հրամայեցի կուսակցական կասայի (6) հաշուից առնել: Ի՞նչ արած, Եագոր ջա՛ն, մենք էլ ազգի փրկիչներ ենք. պէտք է մենք էլ կուշտ ուտենք որ լաւ յեղափոխականներ պատրաստենք, չէ՞:

« Նախաճաշից յետոյ կամեցայ մի քիչ ման գալ որ ստներս բացվեն. պէտք էր սրանց վրասիրտն էլ տեսնել. հրամայեցի ինձ տանել ծովափը: Երբ Պերայի (7) մի նեղ փողոցից անց էինք կենում, յանկարծ կանգ առի: Ի՞նչ եմ տեսնում. գաւաճանների որջ, « Սպլանդիլ կափէ »ն, խոշոր տառերով գրուած: Թարս թարս տղերանց երեսին մի նայեցայ: Նրանք ուրեմն 93 ին մեզ խաբել են թէ այդ որջը ջնջել են: Միտք արեցի, Եագոր ջա՛ն, ներս մտնել ու ես իմ ձեռքը տեղն ու տեղը սպաննել Տօկատլեանին — Ինչպէս յիշում եմ նրա անունը. — բայց չէ՞ որ մի փոքր էլ զգոյշ պէտք է լինել, է՛: Ես յետոյ մի ահաբեկիչ կ'ուղարկեմ նրան, եւ տղերանց էլ մի լաւ յանդիմանութիւն կ'անեմ:

« Մի փոքր ման գալուց յետոյ, տղերք, ասացի, իւրաքանչիւր ոուս որ ձեր քաղաքն է դալիս, պարտականութիւն է զգում այցելել այն տեղը ուր կնքվեց այն փառաւոր դաշնագիրը. Տղերք, Սան—Ստեֆանո՛: Նրանք միմեանց նայեցան. յետոյ « Համեղէք » ասացին, եւ ինձ տարան կայարան որ տեղաց մի կէս ժամուց յետոյ հասանք Սան—Ստեֆանո: Հէնց որ սօզեղտը (8) կանգ առաւ, մի խոշոր վիլիսկա (9) տեսայ որի վրայ գրուած էր Սան—Ստեֆանո փառաւոր անունը: Իսկոյն եւ եթ ես իմ շլապ-

կէս (1) հանեցի եւ վեր իջայ (2), տղերանց էլ հրամայեցի իրանց կասկէաները վեր կաշնել, եւ սկսայ երգել « Բօժէ Զարա Խրսանի » (3): Պէտք է ես նրանց սովրեցնեմ մեր այս ազգային երգը:

« Մարմարայի ծովափին մի գեղեցիկ գիւղ է այդ պատմական վայրը: Մի գեղեցիկ պարտիզում, հոյակապ բարձրանում էր մի շքեղ տուն, որ անկասկած Դագեանների (4) բնակարանը կը լինէր, ուր եւ իջել էր Նիկոլա Մեծ—Դուքսը, եւ ուր կնքուել է դաշնագիրը:

« Տանիցը դուրս գալով մտանք մի սերիշ պարաէզ, ուր դանդում էր ծովափին մի մեծ կափէ — բէսօրան: Այս անիծած Պուլում կալիասեցի յեղափոխականը ի՞նչ էլ շուտ շուտ սովանում է: « Տղերք, ճաշենք » հրամայեցի: Նրանք միմեանց նայեցան: Մի փոքր առանձնացան. սկսան խորհրդակցել ծանր ձայնով. յետոյ յայտնեցին ինձ թէ իրանք չեն ուզում ճաշել. միայն ինձ համար են ճաշ պատրաստել տուել: Երեսում էր չէին համարձակվում իրանց մտաւոր առաջնորդի հետ սեղան նստել: Այդ էլ մի բան է: Ի՞նչ պատուական ճաշ, Եագոր ջա՛ն. թէ դու լինէիր մասներդ էլ հետը կը լպստէիր: Է՛լ սուպ (5) ես ասում, է՛լ ձուկ ես ասում, է՛լ բիֆտէկ ես ասում, է՛լ կօմպոտ ես ասում, էլ միւր ես ասում, էլ որ մինն ասեմ. էլ էն պատուական զինին որ մեր կախեթու զինին յիշեցնում է: Ի՞նչ արած, Եագոր ջա՛ն, մենք էլ ազգի փրկիչներ ենք, պէտք է մենք էլ կուշտ ուտենք որ լաւ յեղափոխականներ պատրաստենք, չէ՞:

« Ճաշից յետոյ պօէզա նստանք Պերա գառնալու. երրորդ ստանցիա (6) հասնելիս յանկարծ տեսնում եմ մի վիլիսկայ որի վերայ գրված է « Պայքօզ »: Յիշեցի իսկոյն թէ հասցոսները մի ժամանակ Պայքօզում տօնում էին իրանց սահմանադրութիւնը. այս էլ մի պատմական տեղ էր. կամեցայ տեսնել. տղերանց հրամայեցի դուրս գալ: Մի փոքր ման գալուց յետոյ ասացի. « Չեր Հունգար—իսկալասուն ես հաւանում եմ. ինչո՞ւ էլ այս տեղ չէք տօնում ձեր սահմանադրութիւնը: » Տղերքը միմեանց նայեցին: Անկասկած նրանք հիանում էին թէ ես նրանց ամէն քունջ ու պուճախը ինչպէս յիշում եմ: Նորից բլլէտ վեր առինք և քառորդ ժամից հասանք Պերա:

« Մի փոքր հանգստանալուց յետոյ, որպէս զի իմ գործունէութիւնը ցոյց տամ, « տղերք, ես ուզում եմ Պատրիարքարան դնալ » ասացի: Տղերքը միմեանց հայեցին: « Համեղէք » ասացին: Ոտով գացինք կուս—կապու որ Պերայից մի տասը բոպէ հեռու է: Պատրիարքարանը մի գեղեցիկ պարտիզում էր գտնվում. մի ինչ որ դանապանի հարցրի թէ սրբազանը այն տեղ է: Չհամարձակվեց ոչ ասել. երեւի իմ համբաւը արդէն տարածվել է: Տղերանց ասացի որ այն տեղ կենան եւ սպասաւորը ինձ ուղիղ առաջնորդեց Պատրիարքի մօտ:

(1) Հրապարակ: (2) Մէկմէտ Ալի: (3) Սրճարան: (4) Խտիվիլալ: (5) Պիսքիւի: (6) Մնտուկ: (7) Բերա: (8) Շոգեկառ: (9) Նշանատախտակ:

(1) Գլխարկ: (2) Վար իջայ: (3) « Տէ՛ր կեցո՛՛ զձարն մեր » ազգային երգ Ռուսերուն: (4) Տատեաններու: (5) Ապուր: (6) Կայարան:

«Ուղիղ են ասում թէ Օրմանեանը խորամանկ է, բայց Եագոր ջա՛ն, ինձ էլ խօսմ ի գուր տեղը չէ որ Իդիօֆ են ասում. ես նրանից աւելի խորամանկ եմ: Օրմանեան պատրիարք մի սպիտակափառ միտուցող, մի փոքրը ինչ հաստիկ փորով մարդ է, անուշ աչքերով. բայց նա եզուխ է, ա՛. նա այդ ամէնը կեղծել է: Իբր թէ մենք նրա դէմ ոչինչ արած լինէինք, նա սկսեց հայրաբար խօսիլ. խօսելիս կարծես թէ բերնիցը շաքար էր լվծում, բայց ես նրա քաղցր լեզուից չէի խաբւում: Մտքուժու ասում էի՝ «Հալա մի փոքր էլ համբերիր, Իդիօֆօս մի օյին էլ քո գլխին կը խաղայ:» Նրան ասացի թէ ես ով եմ, և ինչ պաշտօնով եմ եկել. բայց եթէ ուզում է թող պոլիցիալին իմաց տայ, ես նրան ահաբեկիչ գործողութեան կ'ենթարկեմ:

— Սիրելիս, ասաց ծիծաղելով և բարձր ձայնով, եթէ կ'ուզես դուն ինքզ զնա ոստիկանութեան. հոս ազատութիւն է, բան մը չեն բներ:

«Եագոր ջա՛ն, հէնց դիտենաս էլ բոլորին սաղ աշխարհը փուլ եկաւ գլխիս. այլ եզուխը ինձ դըմքօ (1) էր կարծում, որ ես չկարողանայի հասկնալ նրա միտքը, նա մի կողմից ուզում էր իմ առաջ սուլթանին շողորթել, եւ ինձ խաբել թէ Պոլսում կատարեալ ազատութիւն է տիրում, էլ ի՛նչ կարիք կայ իմ գործունէութեանս: Միւս կողմից ինձ համար թակարդ էր լարում, որ երթամ պոլիցիային յանձնվեմ ես իմ ոստիկ: Եագոր ջա՛ն, միաքարեցի տեղն ու տեղը սպաննել նրան. բայց մտածեցի որ մի փոքր էլ զգոյշ պէտք է լինել, է՛:

«Կամեցայ Դադեանին էլ տեսնել, եւ իր եղբորորդու միսիայի (2) մասին էլ խօսել: Պէտք էր մի փոքր քաղաքավար երեւալ, ուստի իրանց լեզուով խօսելով հարցրի թէ Ատենապետ փաշան ո՞ր տեղ է: Պատասխանեց «ան վերը կ'ըլլայ:»

«Օրմանեանի մօտիցը մեկնելուց յետոյ, դուրս եկայ եւ սկսայ նայել. ուրիշ յարկ չգպաւ աչքիս. սպասաւորին հարցրի թէ ո՞ր տեղաց պէտք է վեր գնալ: Պատասխանեց թէ «Ի՛նչ պէտք է ընես. վերը ոչ ոք կայ:» Ես ինքնիրանս ասացի, կա՛ց Օրմանեան, դու իմ գլխին խաղ խաղացիր: Միտք արացի դառնալ ու տեղն ու տեղը սպաննել նրան. բայց մտածեցի որ մի փոքր էլ զգոյշ պէտք է լինել, է՛:

«Վերադառնալով հիւրանոց քեզ ահա գրում եմ. Պոստը պէտք է մեկնի: Նորից կը գրեմ: Կրկին սովացել եմ, Եագոր ջա՛ն, ցը...»

ՕՅ. ԻԴԻՕԴՕՖ

* * *

Այս նամակէն բան մը չհասկցայ: Իրաւ է թէ շատ մը նշաններ կան որոնք յայտնի կ'ընեն թէ ուղղակի Պոլսէն գրուած է. բայց Պոլիս արձա՞ն, Սան—Սթէֆանոս, յէն երկաթուղիով Պէյքօզի առջեւէն անցնի՞լ, Բերա եւ Գուժաբու իրարու մօտ: Միւս կողմէն ալ իմացեր էի թէ Ժընէվէն Իդիօֆօս անունով մէկը «մտաւոր առաջնորդ»ի

(1) Խմպըլ: (2) Առաքելութիւն:

պաշտօնով Ալեքսանդրիա եկած էր: Ի՛նչ հասկնայի:

Յաջորդ օրը Ալեքսանդրիայէն Եւրոպա կը մեկնէի: Մարտէյլ հասնելուս դէմս ելաւ ծանօթ հայ մը որ հայ ճամբորդներու երթեւեկութեանը կ'աշխատի: Մարդը շատ մտահոգ էր, ու պատմեց գլխուն եկած դէպք մը:

Երեք շաբաթ առաջ Ժընէվէն երկու յեղափոխական Մարտէյլ եկած էին իրենց պաշտօնավայրը երթալու, մէկը Պոլիս, միւսը Ալեքսանդրիա. ինքն ալ պէտք եղած դեւութիւնները ընծայած է անոնց, ինչպէս որ իր գործն է: Եւ ահա առջի օրը յանկարծ մոլեղին դէմը կ'ելլէ Պոլիս գացողը, եւ Գանըպիէնի վրայ իսկ կը սկսի պոռալ կանչել «Մասնի՛չ, դաւաճա՛ն, նրանցից:» Փոխանակ Ալեքսանդրիայ շոգենաւը մտնելու՝ Պոլսինը նստած է եղեր, բայց արդէն երկու անգամ Պոլիս գացած ըլլալով հասկցեր է որ դաւաճանութեան մը զոհ գացեր է: Ա՛լ դուրս չէ ելեր, և Օտէսա երթալով՝ միեւնոյն շոգենաւով ես գարձեր է:

— Ի՛նչպէս եղաւ այդ սխալմունքը, հարցուցի:

Պատասխանեց թէ Ալեքսանդրիայ եւ Պոլսոյ Մէսաժըրիի շոգենաւները միեւնոյն օրը, միեւնոյն ժամուն, հինգ շաբթի Կին ճամբայ կ'ելլեն: Անոնց ալ լեզուն աղէկ մը չի հասկցուիր, ուստի սխալեր եւ Պոլիս գացողը Ալեքսանդրիայ, Ալեքսանդրիա գացողը՝ Պոլսոյ շոգենաւը գրեր է:

Սկսայ խնդալ: Պ. Իդիօֆօսի նամակին բալլիքը զրտած էի:

Անգամ մը որ Ալեքսանդրիա գացած ասեն միաքը կը դնէ թէ Պոլիս կը մտնէ, ա՛լ ամէն բան աչքին պոլսական կ'երեւնայ: Ալեքսանդրիա միւսարէններով լեցուն է: Խորամական քաղաք մըն է որ կը նշմարես ծովէն: Պոլիս ալ հիմա քարափ ունի: «Սթամպուլ» անուն պանդոկ մը կայ, որ կ'ընայ Պոլսինը յիշեցնել: «Սլլանտիտ» սրճարան մըն ալ կայ, և պէտք է գիտնալ որ Պոլսոյ «Կեդրոնական կոմիտէ»-ը 1895ին մահուան սպառնալիքի նամակով Պոլսոյ «Սլլանտիտ»ին անունը վերցնել տուաւ: Սան—Սթէֆանօ Ալեքսանդրիայ մօտ գեղեցիկ դիւղ մըն է, որուն հայկապ քլիւպ—պանդոկը ներքի էր Տասեաններու բնակարանին հետ շփոթել: Ճամբան կայ նաեւ գեղ մը, Բազոս անուն, որ ուսուհայուն բերնին մէջ դիւրաւ կ'ըլլայ Պէքոս, Պէյքօզ: Ալեքսանդրիա Հայոց առաջնորդարանը՝ Պատրիարքարան կը կոչուի, և Յակօբ Աշտա եպիսկոպոսը առանց զժուարութեան պատրիարքը կը կարծուի: Վերը սեւրով, Ալեքսանդրիայ մէջ կը հասկնան Գահիրէն, Լայն:

Ու այս ամէնը թիւրիմացութեան մը հետեւանք:

Եւ միթէ Ժընէվցիներուն թիւրքիայ Հայերուն յեղափոխական առաջնորդի դերն ալ թիւրիմացութիւն մը չէ՞: Քիչ մը մտածողը այս՝ պիտի ըսէ. ու ան ատեն Իդիօֆօսները որո՞նք են:

ՍԿԵՊՏԻԿ

ՌԻՇԱՐԴՈՒԹԻԻՆ ՄԵՐ ՆՈՐ ՀԱՍՅԷԻՆ

L. FRANK,

32, CHESTERTON ROAD,

(ENGLAND).

LONDON, W.